ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՐԿԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ. ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

ԶԵԿՈՒՅՑ

Երևան 2016

Հանձնվել է. Համայնքների ֆինանսիստների միությանը Հասցե. ՀՀ, Երևան, Եր. Քոչար 20 Հեռախոս. (011) 531-397	Հանձնել է. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամը Հասցե. Հայաստան, 0025, Երևան Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ գրադարանի մ/շ, 6-րդ հարկ, 602 սենյակ, Հեռախոս. (+37410) 574868
Ծրագրի ղեկավար՝ Դավիթ Թումանյան	Տնօրեն՝ Հեղինե Մանասյան

:

Սույն հետազոտությունը իրականացվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Զեկույցը կազմելու և ծրագիրն իրականացնելու աշխատանքներին մասնակցել է ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի ամբողջ անձնակազմը, ներառյալ.

Հեղինե Մանասյանը	Ծրագրի տնօրեն, զեկույցի խմբագիր, նախաբանի հեղինակ
Հրաչյա Կաժոյանը	Ծրագրի մեթոդաբանության և հարցարանի մշակման պատասխանատու
Աննա Սարգսյանը	Ծրագրի համակարգող
Մոնիկա Շահմենենդյանը	Ընտրանքի ձևավորման և տվյալների հավաքագրման համակարգող
Տիգրան Մաթոսյանը	Վերլուծաբան, տեքստի հեղինակ
Արմենակ Անտինյանը	«ՀաՄաՏեղ» համաթվի համահեղինակ, զեկույցի խմբագիր
Արման Գասպարյանը	Զեկույցի «Նախապատմություն» բաժնի, «ՀաՄաՏեղ» համաթվի և գծապատկերների համահեղինակ
Անետա Հարությունյանը,	
Մանե Ադամյանը և	Գծապատկերները ձևավորող
Մարիամ Առաքելյանը	
Դիաննա Հովակիմյանը	Հանրային միջոցառումների համակարգող
Արմիդա Ալվանդյանը և Քրիստինա Սահակյանը	Վարչաֆինանսական հարցերի պատասխանատու

Բովանդակություն

Նախաբան և երախտագիտության խոսք i
Հապավումներ iii
Համառոտագիր iv
Նախապատմություն 1
1. Իրազեկություն տեղական ինքնակառավարման ոլորտի վերաբերյալ 5
Գծապատկերներ 1.1 – 1.3 7
2. Վերաբերմունք ՏԻՄ-երի աշխատանքի հանդեպ 9
Գծապատկերներ 2.1 – 2.12 16
3. Քաղաքացիական մասնակցություն ՏԻՄ-երի գործունեությանը 29
Գծապատկերներ 3.1 – 3.6 32
4. Քաղաքացիական ակտիվություն և քաղաքական մասնակցություն 36
Գծապատկերներ 4.1 – 4.3 38
5. Լրատվության աղբյուրները 41
Գծապատկերներ 5.1 – 5.4.1 43
6. Վերաբերմունք հասարակական և միջազգային կազմակերպությունների հանդեպ 47
Գծապատկերներ 6.1 – 6.4.1 49
Հիմնական բացահայտումներ և առաջարկներ տեղական ինքնակառավարման ոլորտի վերաբերյալ 52
«ՀաՄաՏեղ» համաթիվ 54
Հավելված 1. «ՀաՄաՏեղ» համաթվի հիմքում ընկած փոփոխականներ 56
Հավելված 2. Համայնքային ծառայությունները համայնքների պետական և ոչ-պետական հատվածը ներկայացնող մասնագետների աչքերով 65

Նախաբան և երախտագիտության խոսք

Հարգելի՛ ընթերցող,

սիրով Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության վերաբերյալ 2015թ. իրականացված ուսումնասիրության արդյունքներն ամփոփող առաջին վերլուծական զեկույցը: Այն հիմնված է Հայաստանի ողջ տարածքում պատահականորեն ընտրված 1443 տնային տնտեսություններից հավաքագրված և հանրային կարծիքն արտացոլող տվյալների վրա:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» («ՀաՄաՏեղ») ծրագրի շրջանակներում իրականացված ներկայացուցչական հարցման նպատակը համահունչ է եղել ծրագրի նպատակին՝ տրամադրել անաչառ և վստահարժան տեղեկատվություն, ինչը կնպաստի քաղաքացիական հասարակության հզորացմանը և արդյունավետ, հաշվետու ու մասնակցային տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորմանը:

Հետազոտության հիմնական խնդիրներն են եղել սոցիոլոգիական հարցման միջոցով բացահայտել քաղաքացիների տեղեկացվածությունը և մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, ինչպես նաև նրանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության և հաշվետվողականության ընկալումներն ու ակնկալիքները: Ներկայիս իրադրությունը ներկայացնող այս ելակետային ուսումնասիրությունը միտված է ապագային և երկու հաջորդիվ նախատեսված հետազոտությունների համադրությամբ հնարավոր կդարձնի «ՀաՄաՏեղ» ծրագրի աշխատանքի արդյունքում քաղաքացիների իրազեկվածության և վարքագծի փոփոխությունների գնահատումը:

Հարկ է նշել, որ հետազոտության հարցաթերթն ընդգրկել է նաև հարցափնջեր, որոնց պատասխանները ծառայելու են Հայաստանի քաղաքացիական հասարակության հզորացմանն ուղղված՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող, երեք այլ կոնսորցիումային ծրագրերի[1] մոնիտորինգի և ազդեցության գնահատման կարիքներին:

ՀՌԿԿ-Հայաստանը և հետազոտությանն օժանդակած իր գործընկերները՝ Համայնքների ֆինանսիստների միավորումը, Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնը, Երևանի մամուլի ակումբը,

[1] Խոսքը «Մեդիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար», «Թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում՝ քաղաքացիական հասարակության մասնակցության միջոցով» և «Աջակցության Հայաստանում սոցիալական ոլորտի բարեփոխումներին» ծրագրերի մասին է:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը և Եվրասիա համագործակցություն հիմնադրամը, խորապես հավատացած են, որ այս տեղական ինքնակառավարման հիմնահարցերի վերաբերյալ հանրային կարծիքը խիստ կարևոր է լայն լսարանին՝ ներառյալ պաշտոնատարներին, հետազոտողներին և ԶԼՄ-ներին իրազեկելու գործում:

Հուսով ենք, որ առաջարկվող վերլուծական զեկույցը բաց քննարկումների նոր հնարավորություններ է ընձեռում տեղական ինքնակառավարման համակարգի կայացման բարդ ճանապարհին հանրային քաղաքականության առաջարկությունների և հետագա զարգացման հնարավոր ուղիների մշակման համար: Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել քաղաքականություն մշակողներին, փորձագետներին ու վերլուծաբաններին, տեղական ինքնակառավարման ոլորտի գործիչներին և միջազգային դոնոր կազմակերպություններին: Մենք ուրախ կլինենք լսել զեկույցում ներկայացված արդյունքների վերաբերյալ յուրաքանչյուր ընթերցողի մտայնությունները, նկատառումները և առաջարկները:

Օգտվելով առիթից, մեր երախտագիտությունն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր աշխատել են այս զեկույցի վրա. Տիգրան Մաթոսյանին՝ վերլուծական զեկույցը շարադրելու, Արմենակ Անտինյանին և Արման Գասպարյանին՝ «ՀաՄաՏեղ» համաթվի գաղափարը զարգացնելու, Մոնիկա Շահմենենդյանին՝ ընտրանքը կազմելու, Հրաչյա Կաժոյանին ու Աննա Գրադլյանին՝ հարցաթերթի մշակման, Նաիրա Վարդանյանին՝ տվյալադարանն ամբողջացնելու և ՀՌԿԿ-Հայաստանի թիմի մյուս անդամներին՝ վարչական աջակցության համար:

Առանձնահատուկ շնորհակալություն ենք հղում հետազոտության տարբեր փուլերում իրենց ավանդը բերած մեր գործընկերներին, մասնավորապես, Դավիթ Թումանյանին, Վահան Մովսիսյանին, Վահրամ Շահբազյանին, Նունե Սարգսյանին, Սոնա Այվազյանին, Լուսինե Խաչատրյանին, ինչպես նաև տվյալների հավաքագրման դաշտային աշխատանքներն իրականացրած բոլոր խմբավարներին, զրուցավարներին և շատ ուրիշների:

Հեղինե Մանասյան

ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի տնօրեն

Հապավումներ

ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԴՊ	Դժվարանում եմ պատասխանել
ԶԼՄ	Զանգվածային լրատվամիջոցներ
ՀԱՄԱՏԵՂ	«Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» ծրագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան
ՀՖՄ	Համայնքների ֆինանսիստների միավորում
ՀՊ	Հրաժարվում եմ պատասխանից
ՉՎ/ԿՉ	Չի վերաբերում/կիրառելի չէ

Համառոտագիր

Իրազեկություն տեղական ինքնակառավարման ոլորտի վերաբերյալ

Հարցված հայաստանցիների ճնշող մեծամասնությունն անհաղորդ է եղել տեղական ինքնակառավարման մարմինների ընդունած որոշումներին: Հարցվածների 13.4 տոկոսն է հայտնել, որ ծանոթ է իր ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումներին: Հարցվածների 91 տոկոսը չի իմացել իր համայնքի 2015 թ. բյուջեի չափը:

Հարցվածների ճնշող մեծամասնությունը տեղյակ չի եղել տեղական ինքնակառավարմանը վերաբերող հայաստանյան օրենսդրությանը: Օրինակ՝ նրանց միայն 14.4 տոկոսն է իմացել, որ ՀՀ օրենսդրությամբ ավագանին է վաղաժամկետ դադարեցնում իր անդամների լիազորությունները: Հարցվածների 90.2 տոկոսը տեղյակ չի եղել Հայաստանում կառավարման ապակենտրոնացման գործընթացի մասին: Հարցվածների մեծամասնությունը՝ 58.9 տոկոսը, չի իմացել նաև համայնքների խոշորացման գործընթացի մասին:

Վերաբերմունք ՏԻՄ-երի աշխատանքի հանդեպ

ՏԻՄ-երի աշխատանքից լիարժեքորեն բավարարված է եղել հարցված հայաստանցիների տասից մեկը՝ 11.6 տոկոսը: Հարցվածներն ավելի շատ գոհ են եղել ՏԻՄ-երի՝ համայնքները մաքուր պահելու, ավելի քիչ՝ շրջակա միջավայրը և բնական ռեսուրսները պահպանելու, առողջապահության չափորոշիչների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և տեղական ճանապարհները և կամուրջները պահպանելու աշխատանքներից:

Իրենց համայնքների ղեկավարներին անվերապահորեն վստահել է հարցվածների մեկ երրորդից ավելին՝ 38.1 տոկոսը, ավագանու անդամներին՝ մոտ մեկ քառորդը՝ 24.4 տոկոսը: Հարցվածների շատ փոքր մասն է (7.1 տոկոսը) բարձր գնահատել իրենց ՏԻՄ-երի հաշվետվողականության մակարդակը: Իրենց ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության մակադակը բարձր է գնահատել հարցվածների 13 տոկոսը: Մասնավորապես, հարցվածները դժգոհ են եղել ՏԻՄ-երի ֆինանսական գործունեության և որոշումների կայացման թափանցիկությունից:

Հարցված հայաստանցիները թերահավատ են եղել ՏԻՄ-երի միջոցով իրենց իրավունքներն իրացնելու հավասար հնարավորությունների հանդեպ: Օրինակ՝ հարցվածների մեծամասնությունը՝ 58.6 տոկոսը, համոզված է եղել, որ ՏԻՄ-երում կարելի է որևէ խնդիր լուծել կաշառքի, իսկ 79.6 տոկոսը՝ կապերի միջոցով:

Քաղաքացիական մասնակցություն ՏԻՄ-երի գործունեությանը

Հարցմանը նախորդող վեց ամիսների ընթացքում հարցված հայաստանցիների միայն 16.5 տոկոսն է դիմել իր ՏԻՄ-երին՝ որևէ խնդիր լուծելու նպատակով: Թեև ՏԻՄ-

եր դիմող քաղաքացիների թիվը փոքր է եղել, վերջիններիս բավարարվածության աստիճանը ՏԻՄ-երի արձագանքից բավականին բարձր է:

Հարցված հայաստանցիները որպես կանոն չեն մասնակցել ՏԻՄ-երի աշխատանքներին: Հարցմանը նախորդող վեց ամիսների ընթացքում իր համայնքի ավագանու նիստերին մասնակցել է հարցվածների միայն 2.4 տոկոսը, համայնքի բյուջեի վերաբերյալ քննարկումներին՝ 1.7 տոկոսը:

Հարցվածների մասնակցությունը ՏԻՄ-երի ընտրություններին բավականին բարձր է եղել: Հարցմանը նախորդող վերջին ընտրություններին (ինչպես համայնքի ղեկավարի, այնպես և ավագանու անդամների) մասնակցել է հարցվածների մոտավորապես երեք քառորդը: Այնուամենայնիվ, հարցվածների միայն 47.3 տոկոսն է կարծիք հայտնել, որ համայնքի ղեկավարի վերջին ընտրություններն արդար և թափանցիկ են անցել: Ավագանու վերջին ընտրությունների վերաբերյալ նման կարծիք է հայտնել միայն 45.2 տոկոսը:

Քաղաքացիական ակտիվություն և քաղաքական մասնակցություն

Հարցման պահին հարցված հայաստանցիների չնչին տոկոսն է անդամակցել որևէ ֆորմալ կամ ոչ ֆորմալ կազմակերպության: Օրինակ՝ որևէ հասարակական կամ համայնքային կազմակերպության/ասոցիացիայի անդամ է հանդիսացել հարցվածների ընդամենը 1.5 տոկոսը: Քաղաքական կուսակցությունների ակտիվ անդամ է հանդիսացել հարցվածների 2.1 տոկոսը, պասիվ անդամ՝ 6.7 տոկոսը:

Հարցմանը նախորդող վեց ամիսների ընթացքում հարցվածների միայն 2.1 տոկոսն է մասնակցել որևէ բողոքի ցույցի կամ երթի: Նույն ժամանակահատվածում հարցվածների միայն 1.8 տոկոսն է մասնակցել որևէ հասարակական կազմակերպության նախաձեռնած քննարկման կամ հանդիպման:

Լրատվության աղբյուրները

Հարցված հայաստանցիների 82.5 տոկոսը հայտնել է, որ ամեն օր օգտվում է հանրապետական հեռուստատեսությունից: Երկրորդ տեղում ռուսական հեռուստաալիքներն են, որոնցից ամեն օր օգտվում է հարցվածների 51.4 տոկոսը: Հարցվածների շուրջ մեկ երրորդը՝ 31.6 տոկոսը, հայտնել է, որ ամեն օր օգտվում է սոցիալական ցանցերից կամ համացանցային այլ ռեսուրսներից:

Հարցված հայաստանցիները հայտնել են, որ ՏԻՄ-երի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով ամենից հաճախ օգտվում են հանրապետական և տեղական հեռուստատեսություններից, ինչպես նաև համացանցից: Միաժամանակ, հարցվածների փոքր մասն է բավարարված եղել նշված աղբյուրների՝ տեղական ինքնակառավարմանն առնչվող բարեփոխումների վերաբերյալ մատուցած տեղեկատվությամբ:

Վերաբերմունք հասարակական և միջազգային կազմակերպությունների հանդեպ

Հարցված հայաստանցիների փոքր մասն է (6.7 տոկոսը) վստահել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 83.3 տոկոսը, հայտարարել է, որ տեղյակ չէ իր համայնքում որևէ միջազգային կազմակերպության կողմից իրականացվող զարգացման ծրագրի մասին: Սակավաթիվ տեղյակների ճնշող մեծամասնությունը դրական է գնահատել իրենց համայնքներում այդ ծրագրերի առաջ բերած փոփոխությունները:

Նախապատմություն

Հայաստանի Հանրապետության անկախացման առաջին հինգ տարիներին պահպանվում էր տեղական ինքնակառավարման խորհրդային մոդելը[2]: Ներկայիս մոդելի հիմքերը դրվել են դեռևս 20 տարի առաջ, երբ ընդունվեցին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (1995թ.) և Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը (1996թ.): Այս օրենսդրական ակտերով հիմք դրվեց իշխանության ապակենտրոնացմանը: Տեղի ունեցավ իշխանության կենտրոնական մարմինների որոշակի գործառույթների և լիազորությունների փոխանցում ՏԻՄ-երին, որի նպատակն էր ապահովել հաշվետվողականությունը և ներգրավել բնակչությանն այդ գործառույթների իրականացմանը:

Ներկայումս գործող ՀՀ Սահմանադրության 9-րդ գլուխը («Տեղական ինքնակառավարումը») սահմանում է երկրում վարչատարածքային բաժանման հիմնական սկզբունքներն ու տեղական ինքնակառավարման իրականացման ձևերը: Ոլորտը կարգավորող կարևորագույն օրենսդրական փաստաթղթերի թվին պետք է դասել նաև Հայաստանի կողմից 2002թ. հունվարի 25-ին վավերացված «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան», ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002թ. մայիսի 7-ին ընդունված օրենքը: Վերջինս միտված էր նպաստելու ՏԻՄ-երի հզորացմանը, նրանց ֆինանսական և վարչական կարողությունների ընդլայնմանը, ինչպես նաև տեղական ժողովրդավարության զարգացմանը

Տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորմանն էին ուղղված նաև «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 2004թ. դեկտեմբերի 14-ին), «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 2002թ. փետրվարի 6-ին) և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 1997 թ. դեկտեմբերի 26-ին):

Միաժամանակ, Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի առկա խնդիրների մասին լավագույնս վկայում է այն փաստը, որ ոլորտի անկյունաքար հանդիսացող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, դրա ընդունմանը հաջորդած 13 տարիների ընթացքում ենթարկվել է շուրջ 50 փոփոխությունների և լրացումների: 2015 թ. դեկտեմբերի 6-ին համաժողովրդական հանրաքվեի դրված ՀՀ նոր սահմանադրության նախագիծը ևս տեղական ինքնակառավարման ոլորտին վերաբերող փոփոխություններ էր պարունակում[3]:

---

[2] 1987 թ. սեպտեմբերի 1-ի տվյալներով, Խորհրդային Հայաստանի տարածքը տրոհված էր «37 գյուղական և 10 քաղաքային շրջանների, 22 հանրապետական, 5 շրջանային ենթակայության քաղաքների, 31 քաղաքատիպ ավանների և 479 գյուղական սովետների»: («Վարչատարածքային բաժանում», Հայկական սովետական հանրագիտարան: Հատոր 13, Երևան 1987, էջ 19:)

[3] Սահմանադրական փոփոխությունների ընդհանուր սկզբունքների մասին մանրամասն տես՝ Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով. *Հայաստանի Հանրապետության սահմանադրական*

Այս ոլորտի հիմնական խնդիրներից մեկը շարունակում է մնալ բնակչության անտեղյակությունը ՏԻՄ-երի գործառույթների և իրավունքների մասին: Այդ մասին են վկայում դեռևս 2000թ. «Ուրբան Ինսթիթյութ»-ի (Urban Institute) հարցման արդյունքները[4], «Քաունթերփարթ Ինթերնեյշնլ»-ի (Counterpart International)[5] և «Համայնքների ֆինանսիստների միավորման»[6], ինչպես նաև «Քաունթերփարթ Ինթերնեյշնլ»-ի պատվերով Տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոնի[7] կողմից կատարված հետազոտությունները:

Հաշվի առնելով համայնքների տնտեսական ցածր ցուցանիշները, ՏԻՄ-երի գործունեությանը բնակչության պասսիվ ներգրավվածությունը, այդ գործունեության մասին բնակչության անտեղյակությունը, ինչպես նաև ՏԻՄ-երի կողմից իրենց վերապահված լիազորություններն ու ծառայություններն արդյունավետ իրականացնելու անհրաժեշտությունը, ՀՀ կառավարությունը հանդես է եկել համայնքների խոշորացման առաջարկով: Համայնքների խոշորացման առաջին օրինակ կարելի է համարել 2008թ. ընդունված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որով նախկինում առանձին համայնքների կարգավիճակ ունեցող Երևանի տասներկու վարչական միավորները ձևավորեցին խոշորացված Երևան համայնքը: Նշենք, որ այս օրենքը ևս լրացվել և փոփոխվել է 15 անգամ:

Նկատի ունենալով տեղական ինքնակառավարման շարունակական վերափոխումները, ինչպես նաև տեղական ինքակառավարման արդյունավետ համակարգի կայացմանը բնակչության մասնակցության անհրաժեշտությունը, ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքակառավարմանը» («ՀաՄաՏեղ») ծրագիրը նախաձեռնել է հանրային կարծիքի հարցում: Վերջինս իրականացրել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնը:

բարեփոխումների հայեցակարգ. Երևան, մարտ 2014 թ.: (http://moj.am/storage/uploads/A1.pdf) (14.11.2015)

[4] Doane, J., M. Simpson, and C. Rabenhorst (2000). *Baseline Study for Armenia Local Government Program*. Washington, D. C.: Urban Institute.

[5] Civil Society and Local Government Support Program – CSLGSP: USAID/Counterpart International (2012). *Republic of Armenia Strategy Paper on Further Development of Local Self-Government and Decentralization of Power*. Yerevan. (http://program.counterpart.org/Armenia/wp-content/uploads/2012/11/Decentralization-strategy-final-Eng-exec-summary.pdf) (11.10.2015)

[6] Tumanyan, D. (2001). *Politico-Administrative Relations in Armenian Local Government. 9th NISPAcee Conference*. Riga (http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/nispacee/unpan004824.pdf) (11.13.2015)

[7] Տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոն, *Համայնքների բնակչության վերաբերմունքի, տեղական ինքնակառավարման համակարգի առաջիկա բարեփոխման մասին ընկալման և իրազեկվածության աստիճանի ուսումնասիրություն*. Ելակետային հետազոտություն, Երևան 2014թ.:

Հարցման մեթոդաբանությունը

Հանրապետության ողջ տարածքում անցկացված տնային տնտեսությունների ընտրանքային հարցման դաշտային աշխատանքներն իրականացվել են 2015թ. հուլիսին:

Ընտրանքի մեթոդը՝ բազմաստիճան կլաստերային ընտրանք.

- Ստրատիֆիկացումը կատարվել է ըստ մարզերի և բնակավայրի տեսակի՝ համակցված թիրախային համայնքների նպատակային ընտրանքի հետ:
- Տնային տնտեսությունների (տ/տ) պատահական ընտրանքը կատարվել է յուրաքանչյուր կլաստերում (11 տ/տ յուրաքանչյուր կլաստերում):
- Հարցվողի ընտրությունը կատարվել է «Քիշի աղյուսակի» մեթոդով՝ տ/տ չափահաս անդամներից:

Ընտրանքի ծավալը

- Ընտրվել է 1500 տնային տնտեսություն, որոնցից 540-ը՝ Երևանում, 465-ը՝ այլ քաղաքային բնակավայրերում և 495-ը՝ գյուղական բնակավայրերում:

Ընտրանքի շրջանակը

- Օգտագործվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված էլեկտրականություն սպառողների հասցեացանկը:

Ընտրանքի կառուցվածքը

- Կատարվել է 1100 տ/տ պատահական ընտրանք (ընդհանուր բնակչության բաշխման համամասնությամբ):
- Ներառվել է «ՀաՄաՏեղ» ծրագրում ընդգրկված 35 պիլոտային համայնք:
- Ընտրվել են համայնքների խոշորացման ծրագրի 3 պիլոտային համայնքային խմբերից յուրաքանչյուրում առավել փոքր և կենտրոնից առավել հեռու գտնվող այն համայնքները, որոնք չեն ընդգրկվել պատահական ընտրանքում:

Ընտրանքի վերջնական կազմը

- Ընտրանքի ծավալը կազմել է 1463 տնային տնտեսություն՝ ընտրված հետևյալ 133 կլաստերներից (համայնքներից).

- 100 պատահական ընտրված համայնք,
- 27 թիրախային համայնք (պատահական ընտրանքից դուրս մնացած) և
- 6 համայնք՝ ընտրված համայնքների խոշորացման 3 պիլոտային խմբերից (յուրաքանչյուրում 11 տ/տ):

Հավելենք, որ տնային տնտեսությունների հարցումից զատ, ընտրանքում ընդգրկված համայնքներում հարմարավետության սկզբունքով հարցվել են նաև պետական և ոչ-պետական հատվածը ներկայացնող տարբեր մասնագետներ (մանկավարժներ, դպրոցների վարչական աշխատողներ, գյուղապետարանների աշխատակազմի ներկայացուցիչներ, գործարարներ, գյուղատնտեսներ, բժիշկներ, անասնաբույժներ, իրավաբաններ և այլք): Վերջիններիս առաջադրվել են տեղական ինքնակառավարման արդյունավետությանը վերաբերող հարցեր: Պետական և ոչ-պետական հատվածի մասնագետների հետ հարցման արդյունքները զետեղված են սույն Զեկույցի *Հավելված 2*-ում:

Հարցաշար

Տնային տնտեսությունների ընտրանքային հարցման նպատակով օգտագործված հարցաշարը բաղկացած է եղել մի շարք հարցախմբերից: Դրանցից առաջինը նպատակ ուներ բացահայտել հարցվողների իրազեկության աստիճանը տեղական ինքնակառավարմանը վերաբերող տարբեր հարցերի (օրինակ՝ օրենսդրության կամ բարեփոխումների) շուրջ, երկրորդը՝ հարցվողների գնահատականը ՏԻՄ-երի աշխատանքի (օրինակ՝ հաշվետվողականության) հանդեպ: Երրորդ հարցախումբը պետք է ի հայտ բերեր հարցվողների մասնակցության մակարդակը ՏԻՄ-երի աշխատանքներին (օրինակ՝ մասնակցությունը համայնքային ծրագրերի քննարկումներին): Չորրորդ հարցախումբը նպատակ էր հետապնդում երևան հանել Հայաստանում քաղաքացիական ակտիվության ընդհանուր պատկերը (օրինակ՝ անդամակցությունը ՀԿ-ներին), իսկ հինգերորդը՝ հարցվողների լրատվության աղբյուրները: Վերջապես, վեցերորդ հարցախմբում ընդգրկված հարցերը պետք է բացահայտեին հարցվողների վերաբերմունքը Հայաստանում գործող հասարակական և միջազգային կազմակերպությունների հանդեպ:

Տեխնիկական հուշագիր

Զեկույցի բոլոր գծապատկերներում և աղյուսակներում ներկայացված են բոլոր վավեր պատասխանները՝ արտահայտված տոկոսներով (եթե այլ նշում չկա): Այն դեպքերում, երբ հարցվածները մեկից ավելի պատասխանի հնարավորություն են ունեցել, տոկոսների հանրագումարը տարբերվում է հարյուրից, ինչը հաշվարկի առանձնահատկություն է, ոչ թե թվաբանական սխալ: Վերլուծության մեջ ներկայացված թվերի և գծապատկերներում կամ աղյուսակներում տրված թվերի միջև կարող են լինել աննշան տարբերություններ, ինչը թվերի կլորացման հետևանք է: Որոշ դեպքերում, շարադրանքը կամ պատկերներն ավելի հստակ ներկայացնելու նպատակով, փոքրարժեք թվերն անտեսվել են:

1. Իրազեկություն տեղական ինքնակառավարման ոլորտի վերաբերյալ

Համայնքի ղեկավար, ավագանի, խորհրդակցական մարմիններ

Հարցված հայաստանցիները, որպես կանոն, ճանաչում են իրենց համայնքի ղեկավարին, մինչդեռ համայնքի ներկայացուցչական մարմնի (ավագանու) անդամներին ճանաչում են ոչ բոլորը: Այսպես, հարցվածների գրեթե երեք քառորդը՝ 73.3 տոկոսը գիտի՝ ով է իր համայնքի ղեկավարը: Սակայն, հարցվածների գրեթե կեսն իր համայնքի ավագանու անդամներից որևէ մեկին չի ճանաչում: Մյուս կեսը ճանաչում է համայնքի ավագանու անդամներից գոնե մեկին (Գծապատկեր 1.1):

Հարցված հայաստանցիների մեծամասնությունը տեղյակ չէ իրենց համայնքների ղեկավարներին կից՝ օրենքով նախատեսված խորհրդակցական մարմինների առկայության մասին: Մասնավորապես, այն հարցին՝ արդյոք իրենց համայնքի ղեկավարն ունի՞ խորհրդակցական մարմին(ներ), հարցվածների 58.4 տոկոսը պատասխանել է, որ տեղյակ չէ: Հարցվածների 29.3 տոկոսը տեղյակ է եղել խորհրդակցական մարմինների գոյության մասին, իսկ 12.3 տոկոսը՝ ոչ:

Որոշումների կայացում, ֆինանսներ, օրենսդրություն

Հարցված հայաստանցիների ճնշող մեծամասնությունն անհաղորդ է մնում նաև իր՝ ՏԻՄ-երի կողմից ընդունվող որոշումներին. հարցվածների միայն 13.4 տոկոսն է հայտնել, որ ծանոթ է իր ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումներին: Միաժամանակ, ընդամենը 7.8 տոկոսն է տեղյակ, թե ՏԻՄ-երի կողմից ինչպես են սահմանվում տեղական տուրքերի դրույքաչափերը:

Հայաստանցիները մեծամասամբ իրազեկ չեն նաև իրենց համայնքների ֆինանսական հարցերից. օրինակ՝ հարցվածների 91 տոկոսը չի իմացել իր համայնքի 2015 թ. բյուջեի չափը (Գծապատկեր 1.2): Հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 78 տոկոսը, չի իմացել՝ արդյոք իր համայնքը պարտքեր ունի, թե ոչ[8]: Նրանց 73 տոկոսը տեղյակ չի եղել նաև, թե ՏԻՄ-երն ուր են ուղղում տեղական հարկերից, տուրքերից, վճարներից և տույժ-տուգանքներից ստացված եկամուտները:

Հարցվածներից քչերն են ծանոթ նաև տեղական ինքնակառավարման մարմիններին վերաբերող ՀՀ օրենսդրությանը: Այսպես, հարցվածների միայն 5.3

[8] Իմիջիայլոց, համայնքի պարտքերի մասին իմացող քաղաքացիների 66.5 տոկոսն այդ տեղեկությունն ստացել է շրջապատից, 16.8 տոկոսը՝ տեղական հեռուստատեսությունից, 14.8 տոկոսը՝ հենց ՏԻՄ-երից:

տոկոսն է իմացել, որ ՏԻՄ-երի հաշվետվողականության վերաբերյալ օրենսդրական պահանջ կա: Նրանց 93.6 տոկոսը տեղյակ չի եղել որևէ օրենքի կամ կարգի, որով կարգավորվում է հանրային մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը: Միաժամանակ, հարցվածների միայն 14.4 տոկոսն է ճիշտ նշել, որ ՀՀ օրենսդրությամբ ավագանին է վաղաժամկետ դադարեցնում իր անդամի լիազորությունները. հարցվածների 43 և 33 տոկոսն այդ իրավունքը վերագրել է համապատասխանաբար բնակիչներին և համայնքի ղեկավարին (Գծապատկեր 1.3):

Տեղական ինքնակառավարման բարեփոխումներ

Հարցված հայաստանցիների յուրաքանչյուր տասից ինը (90.2 տոկոսը) տեղյակ չի եղել Հայաստանում կառավարման ապակենտրոնացման գործընթացի մասին: Այն հարցին, թե «Ինչպիսի՞ ազդեցություն ունի այդ գործընթացը Ձեր համայնքի վրա», ապակենտրոնացմանը տեղյակ սակավաթիվ քաղաքացիների 34.5 տոկոսը պատասխանել է «դրական», 23.2 տոկոսը՝ «բացասական» և 32.4 տոկոսը՝ «ոչ մի»: Միաժամանակ, հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 74.4 տոկոսը, հայտարարել է, որ հետաքրքրված չէ ապակենտրոնացման գործընթացներով:

Հարցված հայաստանցիների մեծամասնությունը՝ 58.9 տոկոսը, տեղյակ չի եղել նաև համայնքների խոշորացման գործընթացի վերաբերյալ: Այն հարցին, թե խոշորացման գործընթացն ինչպես կանդրադառնա համայնքների վրա, տեղյակ քաղաքացիների 23.9 տոկոսը պատասխանել է «դրականորեն» և «շատ դրականորեն», մինչդեռ «բացասաբար» կամ «շատ բացասաբար» պատասխանողների թիվը կրկնակի շատ է եղել՝ 47.2 տոկոս:

Գծապատկերներ 1.1 – 1.3

Գծապատկեր 1.1. Ձեր համայնքի ավագանու անդամներից քանիսի՞ն եք ճանաչում



Գծապատկեր 1.2. Գիտե՞ք արդյոք Ձեր համայնքի 2015թ. բյուջեի չափը



Գծապատկեր 1.3. Ձեր կարծիքով, ո՞վ/ովքե՞ր կարող են կասեցնել ավազանու անդամի մանդատը



2. Վերաբերմունք ՏԻՄ-երի աշխատանքի հանդեպ

Ընդհանուր գնահատական ՏԻՄ-երի աշխատանքին

ՏԻՄ-երի աշխատանքից «շատ» կամ «լիովին» բավարարված է Հայաստանի տաս քաղաքացիներից մեկը՝ 11.6 տոկոսը: ՏԻՄ-երի աշխատանքից «շատ քիչ» բավարարվածները կամ «ամենևին» չբավարարվածները եռապատիկ շատ են՝ 36 տոկոսը: Հայաստանցիների գրեթե կեսը՝ 46.8 տոկոսը, «որոշ չափով» է գոհ ՏԻՄ-երի աշխատանքից (Գծապատկեր 2.1):

Համայնքների աշխատակազմերի մասնագիտական որակները գնահատելիս ևս, հարցված հայաստանցիների ամենամեծ խումբը (38.5 տոկոսը) տվել է չեզոք պատասխան՝ նշելով որ այդ որակները ո՛չ բարձր են, ո՛չ ցածր: Հարցվածների 22.9 տոկոսի կարծիքով աշխատակազմերի մասնագիտական որակները «բարձր» են կամ «շատ բարձր», մինչդեռ 19.8 տոկոսի կարծիքով դրանք «ցածր» են կամ «շատ ցածր»:

Հարցված հայաստանցիների զգալի մասը՝ 43 տոկոսը, դժվարացել է պատասխանել «Արդյոք գոյություն ունե՞ն ավագանու այնպիսի անդամներ, որոնք արժանի չեն իրենց պաշտոնին» հարցին: Հարցվածների 40.7 տոկոսը հայտարարել է, որ ավագանու բոլոր անդամներն արժանի են: Հարցվածների 16.3 տոկոսն, այնուամենայնիվ, կարծիք է հայտնել, որ գոյություն ունեն ավագանու անդամներ, որոնք արժանի չեն իրենց պաշտոնին: Այսպես մտածողներն ամենից հաճախ բերել են հետևյալ երեք պատճառաբանությունը. ա/ ավագանու այդպիսի անդամները պաշտոնը զբաղեցնում են անձնական շահադիտական նկատառումներով, բ/ նրանք երբեք չեն հանդիպում բնակիչների հետ և գ/ նրանք համապատասխան կրթություն չունեն:

Արձագանք բնակիչների անձնական խնդիրներին

Ընդհանրապես, հայաստանցիների փոքր տոկոսն է դիմում ՏԻՄ-երին, այն էլ՝ գերազանցապես անձնական խնդիրներով: Օրինակ, հարցմանը նախորդող վեց ամիսների ընթացքում քաղաքացիների 16.5 տոկոսն է օգնության համար դիմել համայնքի ղեկավարին: Այնուամենայնիվ, տեղական իշխանության մարմիններ դիմած քաղաքացիների մեծամասնությունը դրական է արտահայտվում իր փորձառության վերաբերյալ: Այսպես՝ նրանց 67.2 տոկոսի կարծիքով համայնքի ղեկավարները «արագ» կամ «շատ արագ» են արձագանքում հնչեցված մտահոգություններին: Ավագանու անդամների արձագանքը նման գնահատականի է արժանացել հարցվածների 65.8 տոկոսի կողմից: Արձագանքի արագության առումով հայաստանցիներն ավելի գոհ են ՏԻՄ-երից, քան, օրինակ ԱԺ պատգամավորներից, պետական այլ պաշտոնյաներից, քաղաքական կուսակցությունների ղեկավարներից

կամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից (Գծապատկեր 2.2):

Հարցված հայաստանցիների ճնշող մեծամասնությունը նաև համոզված է, որ ՏԻՄ-երի առջև խնդիր բարձրաձայնելը դժվարություն չի ներկայացնում: Օրինակ՝ համայնքի ղեկավարի առջև որևէ մտահոգություն բարձրաձայնելը «հեշտ» կամ «շատ հեշտ» է համարել հարցվածների 81.5 տոկոսը, ավագանու անդամի առջև՝ 83.6 տոկոսը: Այսպիսի բարձր գնահատականի ԱԺ պատգամավորներն արժանացել են հարցվածների 60 տոկոսի իսկ պետական այլ պաշտոնյաները՝ 54.8 տոկոսի կողմից (Գծապատկեր 2.3):

Արձագանք համայնքային խնդիրներին

Մաքրություն, շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանություն

Հարցված հայաստանցիների շուրջ կեսը՝ 46.7 տոկոսը, դրականորեն կամ շատ դրականորեն է գնահատում իրենց ՏԻՄ-երի աշխատանքը համայնքների մաքրությունը պահպանելու ուղղությամբ[9]: Մաքրության հարցում ՏԻՄ-երի աշխատանքը բացասաբար և խիստ բացասաբար է գնահատել յուրաքանչյուր չորրոդ հարցվածը (23.1 տոկոս): Համայնքները մաքուր պահելու ՏԻՄ-երի ջանքերը «ո՛չ լավ, ո՛չ վատ» է համարել հարցվածների 28.6 տոկոսը (Գծապատկեր 2.4):

Հարցվածներն ավելի քիչ են բավարարված ՏԻՄ-երի՝ շրջակա միջավայրը և բնական ռեսուրսները պահպանելու ջանքերով: Այսպես, հարցվածների մեկ երրորդն է կարծիք հայտնել, որ ՏԻՄ-երը ինչ-որ քայլ են ձեռնարկում համայնքներում շրջակա միջավայրի և բնակելի/ոչ բնակելի տարածքների պահպանության խնդիրները լուծելու համար: Հարցվածների 39.4 տոկոսը համոզված է եղել, որ ՏԻՄ-երն այդ ուղղությամբ ոչինչ չեն անում:

Միաժամանակ, հարցվածների ընդամենը 23.8 տոկոսն է կարծիք հայտնել, որ ՏԻՄ-երը «լավ» կամ «շատ լավ» են կատարում անտառները և ջրային ռեսուրսները պահպանելու գործառույթը: Նույնքան հարցված հայաստանցիներ բացասաբար և խիստ բացասաբար է գնահատել ՏԻՄ-երի այդ աշխատանքը: Բնական ռեսուրսները պահպանելու ՏԻՄ-երի ջանքերը «ո՛չ լավ, ո՛չ վատ» է գնահատել հարցվածների 24.3 տոկոսը (Գծապատկեր 2.4):

Առողջապահություն

Հարցված հայաստանցիների ընդամենը 21.9 տոկոսն է, որ ՏԻՄ-երի կողմից համայնքային սննդի կետերում առողջապահական չափորոշիչների պահպանման

[9] Իմիջիայլոց, երևանցիների 33.8 տոկոսն է «լավ» կամ «շատ լավ» գնահատել իրենց ՏԻՄ-երի կողմից այդ գործառույթի կատարումը:

վերահսկողությունը գնահատել է «լավ» կամ «շատ լավ»[10]: Հարցվածների 24.1 տոկոսը ՏԻՄ-երի այս գործառույթը գնահատել է բացասաբար կամ խիստ բացասաբար, 29.9 տոկոսը՝ «ո՛չ լավ, ո՛չ վատ»:

Հայաստանցիների 26.7 տոկոսն է գոհ կամ խիստ գոհ եղել այն բանից, թե ինչպես են ՏԻՄ-երը կատարում առողջապահական հաստատությունների կառավարումը: Հարցվածների 23.4 տոկոսը դժգոհ կամ խիստ դժգոհ է եղել այդ կառավարումից, մինչդեռ 32.6 տոկոսն այդ կառավարումը համարել է «ո՛չ լավ, ո՛չ վատ» (Գծապատկեր 2.4):

Օրենքի և կարգի պահպանում, տեղական վեճերի լուծում

Հարցված հայաստանցիների 30.6 տոկոսը «լավ» կամ «շատ լավ» է գնահատել ՏԻՄ-երի աշխատանքը՝ համայնքներում օրենքը և կարգը պահպանելու ուղղությամբ: Այս հարցում դժգոհների կամ խիստ դժգոհների թիվը ավելի փոքր է եղել՝ 18.9 տոկոս: Հարցվածների 31.1 տոկոսը ՏԻՄ-երի այս գործառույթը գնահատել են «ո՛չ լավ, ո՛չ վատ»:

Միաժամանակ, հայաստանցիների ավելի փոքր՝ 21.6 տոկոսն է «լավ» կամ «շատ լավ» գնահատել տեղական վեճերը լուծելու ՏԻՄ-երի կարողությունը: Հարցվածների 14 տոկոսը դժգոհ կամ խիստ դժգոհ է եղել այս գործառույթի իրականացումից, մինչդեռ 24.5 տոկոսը հայտարարել է, որ այդ գործառույթը ՏԻՄ-երն իրականացնում են «ո՛չ լավ, ո՛չ վատ» (Գծապատկեր 2.4):

Կրթություն, մշակույթ, սպորտ

Հայաստանցիների 37.7 տոկոսը «լավ» կամ «շատ լավ» է գնահատել ՏԻՄ-երի կողմից կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների կառավարումը: Այս ոլորտներում ՏԻՄ-երի աշխատանքը բացասաբար և խիստ բացասաբար է բնութագրել հարցվածների 15.1 տոկոսը, «ո՛չ լավ, ո՛չ վատ»՝ 28.2 տոկոսը (Գծապատկեր 2.4):

Տեղական ճանապարհների և կամուրջների պահպանում

Հարցված հայաստանցիների 32.7 տոկոսն է «լավ» կամ «շատ լավ» գնահատել ՏԻՄ-երի աշխատանքը համայնքային ճանապարհները և կամուրջները պահպանելու ուղղությամբ: Գրեթե նույնքան մարդ՝ 30.6 տոկոսը, ՏԻՄ-երի այս գործառույթից դժգոհ կամ շատ դժգոհ է եղել: Հարցվածների 28.2 տոկոսը ճանապարհները և կամուրջները պահպանելու ՏԻՄ-երի ջանքերը գնահատել է «ո՛չ լավ, ո՛չ վատ» (Գծապատկեր 2.4):

[10] Ընդ որում, հարցված երևանցիների 11.9 տոկոսն է «լավ» կամ «շատ լավ» գնահատել իրենց ՏԻՄ-երի այդ նույն գործառույթը:

Կոռուպցիա

Հարցված հայաստանցիների չնչին մասն է հայտարարել, որ ՏԻՄ-երում պաշտոնյաներին նվերներ տալու պրակտիկան հաճախակի հանդիպող երևույթ է, իսկ կեսից փոքր-ինչ ավելին պարզապես խուսափել է պատասխանել նվիրատվությունների վերաբերյալ հարցին: Այսպես, հարցվածների միայն 1.7 տոկոսն է կարծիք հայտնել, որ հարցմանը նախորդող վեց ամիսների ընթացքում իրենց համայնքի բնակիչներն ստիպված են եղել «հաճախ» կամ «մշտապես» նվեր (գումարի, ապրանքի կամ լավության տեսքով) մատուցել համայնքի ղեկավարին և վերջինիս աշխատակազմին՝ հանրային որևէ ծառայություն ստանալու դիմաց: Հարցվածների 36.5 տոկոսի կարծիքով, իրենց համայնակիցները «երբեք» ստիպված չեն եղել նվեր տալ: Հարցվածների 56.4 տոկոսը պարզապես պատասխանել է «չգիտեմ» կամ դժվարացել է պատասխանել: Գրեթե նույն տոկոսային համամասնությամբ, հարցվածները հայտարարել են, որ նվիրատվության պրակտիկան հազվադեպ հանդիպող երևույթ է նաև ավագանու անդամներից և մարզպետից (կամ վերջինիս աշխատակազմից) ծառայություն ստանալու պարագայում (Գծապատկեր 2.5):

Նվիրատվությունների վերաբերյալ հարցից խուսափողների մեծ բաժինը կարելի է մեկնաբանել նաև հետևյալ կերպ. մարդկանց մի ստվար զանգված վստահ չէ, որ ՏԻՄ-երում նվիրատվության պրակտիկան գոյություն չունի:[11] Այս ենթադրությունն ամրապնդվում է հարցման մեկ այլ արդյունքով. մասնավորապես, հարցվածների 58.6 տոկոսի համոզմամբ, կաշառքը քաղաքացիներին կարող է «շատ» կամ «որոշ չափով» օգնել իրենց խնդիրները ՏԻՄ-երի միջոցով լուծելու համար («կաշառքի» և պաշտոնյային մատուցվող «նվերի» տարբերությունն իրականում դժվար է որոշել) (Գծապատկեր 2.6):

Հարցված հայաստանցիները թերահավատ են նաև ՏԻՄ-երի միջոցով իրենց իրավունքներն իրացնելու հավասար հնարավորությունների վերաբերյալ: Մասնավորապես, հարցվածների գրեթե 60 տոկոսի կարծիքով «սոցիալական դիրքը / պաշտոնը» շատ կարևոր գործոն են ՏԻՄ-երի միջոցով իրենց խնդիրները լուծելու համար: Նույնքան մարդ համոզված է եղել, որ «կապերն» են շատ կարևոր ՏԻՄ-երում որևէ խնդիր լուծելու համար (Գծապատկեր 2.6):

Հաշվետվողականություն և թափանցիկություն

Հարցվածների ընդամենը 7.1 տոկոսն է համարել, որ իրենց ՏԻՄ-երի հաշվետվողականության մակարդակն ընդհանուր առմամբ «բարձր» կամ «շատ բարձր» է: Հարցվածների 26.4 տոկոսի կարծիքով, այն «ցածր» է կամ «շատ ցածր», 23.6 տոկոսի կարծիքով՝ «ո՛չ ցածր, ո՛չ բարձր»[12]: Միաժամանակ, հարցվածների 30.3

[11] Չի բացառվում, որ հարցվածները հրաժարվում են պատասխանից՝ վախենալով ճշմարտությունը բարձրաձայնելու հնարավոր հետևանքներից:

[12] Հարցված երևանցիների միայն 1.8 տոկոսն է «բարձր» կամ «շատ բարձր» գնահատել իրենց ՏԻՄ-երի հաշվետվողականության մակարդակը:

տոկոսի կարծիքով, ՏԻՄ-երի հաշվետվողականության մակարդակը հարցմանը նախորդող տարվա համեմատ «ո՛չ նվազել է, ո՛չ աճել», 8.7 տոկոսի կարծիքով՝ աճել է, իսկ 8.6 տոկոսի կարծիքով՝ նվազել: Հարցվածների կեսից ավելին՝ 52.4 տոկոսը, հրաժարվել է պատասխանել հաշվետվողականության մակարդակի փոփոխություններին վերաբերող հարցին(«չգիտեմ/դժվարանում եմ պատասխանել»):

Հարցված հայաստանցիների միայն 13 տոկոսն է ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը «բարձր» կամ «շատ բարձր» գնահատել: ՏԻՄ-երի թափանցիկությունը «ցածր» կամ «շատ ցածր» գնահատողների թիվը եռապատիկ շատ է եղել՝ 39.5 տոկոս, մինչդեռ չեզոք՝ «ո՛չ բարձր, ո՛չ ցածր» գնահատական տվողներինը՝ 28.5 տոկոս[13]: Միաժամանակ, հայաստանցիների մոտ կեսը (46 տոկոսը) կարծիքով, ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության մակարդակը հարցմանը նախորդող տարվա համեմատ ո՛չ ավելացել է, ո՛չ պակասել է: Հարցվածների 12.8 տոկոսի կարծիքով, թափանցիկությունն աճել է, 8.1 տոկոսի կարծիքով՝ նվազել:

Նախ և առաջ, հարցվածները դժգոհ են ՏԻՄ-երի ֆինանսական գործունեության թափանցիկությունից: Օրինակ՝ բոլոր հարցվածների միայն 6.2 տոկոսն է «լավ» կամ «շատ լավ» գնահատել ՏԻՄ-երի ջանքերը բնակիչներին համայնքի բյուջեի մասին իրազեկելու ուղղությամբ: Մարդկանց կեսից ավելին (56.3 տոկոսը) այդ ջանքերը գնահատել է «վատ» կամ «շատ վատ»: Միաժամանակ, հարցվածների միայն 8 տոկոսն է գոհ կամ շատ գոհ եղել ՏԻՄ-երի կողմից գնումների իրականացման ընթացակարգերի (օրինակ՝ մրցույթների կազմակերպման) թափանցիկությունից: (Գծապատկեր 2.7):

Հարցվածների մոտ կեսը՝ 47.4 տոկոսը, «վատ» կամ «շատ վատ» է գնահատել ՏԻՄ-երի աշխատանքը՝ տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացի մեջ բնակիչներին ներգրավելու ուղղությամբ: Տաս հայաստանցիներից ընդամենը մեկն է այդ աշխատանքին տվել «լավ» կամ «շատ լավ» գնահատականը: Ի մասնավորի՝ հարցված հայաստանցիների 9.7 տոկոսն է գոհ կամ շատ գոհ եղել այն բանից, թե ինչպես են ՏԻՄ-երը խորհրդակցում բնակիչների հետ հանրային ռեսուրսների (օրինակ՝ հողեր, անտառներ, շենքեր) օգտագործման, վարձակալության և վաճառքի վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Հայաստանցիների 39.6 տոկոսը նշված հանրային ռեսուրսների կառավարման հարցում բնակիչների կարծիքը լսելու ՏԻՄ-երի ջանքերը գնահատել են «վատ» կամ «շատ վատ», 20.3 տոկոսը՝ «ո՛չ լավ, ո՛չ վատ» (Գծապատկեր 2.7):

Համայնքի ղեկավար և ավագանի

Հարցվածների 90 տոկոսից ավելին «կարևոր» և «շատ կարևոր» է համարել, որ համայնքի ղեկավարը հաշվի առնի մարդկանց կարծիքը (Գծապատկեր 2.8): Սակայն

[13] Հարցված երևանցիների միայն 1.3 տոկոսն է «բարձր» կամ «շատ բարձր» գնահատել իրենց ՏԻՄ-երի թափանցիկության մակարդակը:

հարցվածների 24.9 տոկոսի կարծիքով, իր համայնքի ղեկավարը երբեք հաշվի չի առնում մարդկանց կարծիքը (Գծապատկեր 2.9):

Հարցվածների 91.7 տոկոսի կարծիքով, համայնքի ղեկավարը տարին առնվազն մեկ անգամ պետք է հանդիպի համայնքի բնակիչներին, որպեսզի քննարկի և համաձայնության գա համայնքի զարգացման ծրագրերի շուրջ, 91.2 տոկոսի կարծիքով՝ տեղեկացնի ՏԻՄ-երի որոշումների մասին (Գծապատկեր 2.10, 2.11): Հարցվածների 91.2 տոկոսը նաև կարծիք է հայտնել, որ համայնքի ղեկավարը նույն հաճախականությամբ պետք է իր ընտրազանգվածի հետ դեմ առ դեմ քննարկի տեղական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված քայլերը (Գծապատկեր 2.12): Սակայն, իրական պատկերն սպասելիքներին չի համապատասխանում: Հարցվածների միայն 29.2, 26.2 և 28.3 տոկոսն է հայտնել, որ հարցմանը նախորդող տարվա ընթացքում իրենց համայնքների ղեկավարները հանդիպել են բնակիչների հետ համապատասխանաբար համայնքի զարգացման ծրագրերը համաձայնեցնելու, ՏԻՄ-երի որոշումների մասին տեղեկացնելու, և տեղական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված քայլերը քննարկելու նպատակով (Գծապատկեր 2.13, 2.14, 2.15):

Հարցվածների ճնշող մեծամասնությունը նաև ավագանու անդամների կողմից լսելի լինելու ցանկություն է հայտնել: Մասնավորապես, հարցվածների 94.7 տոկոսը «կարևոր» և «շատ կարևոր» է համարել, որ ավագանու անդամը հաշվի առնի մարդկանց կարծիքը (Գծապատկեր 2.8): Սակայն հարցվածների 29.3 տոկոսի կարծիքով, ավագանու անդամները երբեք հաշվի չեն առնում մարդկանց կարծիքը, 24.2 տոկոսի կարծիքով՝ նրանք դա երբեմն են անում (Գծապատկեր 2.9):

Հարկ է նաև նշել, որ համայնքի ղեկավարը և ավագանու անդամներն ավելի դրականորեն են ընկալվում պետության մյուս ներկայացուցիչների կողքին: Օրինակ՝ երկրի նախագահը մարդկանց կարծիքը հաշվի չի առնում հարցվածների 50.9 տոկոսի կարծիքով, Ազգային ժողովի պատգամավորը՝ 42.1 տոկոսի կարծիքով (Գծապատկեր 2.9):

Վստահություն

Հարցված հայաստանցիների 38.1 տոկոսը հայտնել է, որ իր համայնքի ղեկավարին «շատ» կամ «լիովին» է վստահում: Ամենևին չի վստահում 23 տոկոսը, «ո՛չ շատ, ո՛չ քիչ»՝ 22.6 տոկոսը (Գծապատկեր 2.16): Իմիջիայլոց, հարցված երևանցիների 10.4 տոկոսն է ասել, որ «շատ» կամ «լիովին» վստահում է իր համայնքի ղեկավարին:

Վստահությունն ավագանու անդամների նկատմամբ ավելի ցածր է: Հարցված հայաստանցիների 24.4 տոկոսն է հայտնել, որ նրանց «շատ» կամ «լիովին» է

վստահում[14]: Ամենևին չի վստահում հարցվածների 27.6 տոկոսը, «ո՛չ շատ, ո՛չ քիչ»՝ 22.7 տոկոսը (Գծապատկեր 2.16):

Հատկանշական է, որ վստահության առումով ևս ՏԻՄ-երի ներկայացուցիչները ավելի շահեկան դիրքում են, քան պետական մյուս պաշտոնյաները կամ Ազգային ժողովի պատգամավորները: Օրինակ՝ հարցվածների ընդամենը 5 տոկոսն է «շատ» կամ «լիովին» վստահում պետական այլ պաշտոնյաներին, մինչդեռ վերջիններիս ամենևին չի վստահում 48 տոկոսը: Երկրի նախագահին «շատ» կամ «լիովին» վստահում է հարցվածների 12.7 տոկոսը, ամենևին չի վստահում 46.8 տոկոսը: Հայաստանցիների 11.4 տոկոսն է «շատ» կամ «լիովին» վստահում Ազգային ժողովի իր պատգամավորին: Վերջինիս ամենևին չի վստահում հարցվածների 39.5 տոկոսը (Գծապատկեր 2.16):

[14] Հարցված երևանցիների միայն 6 տոկոսն է ասել, որ «շատ» կամ «լիովին» է վստահում իր ավագանու անդամներին:

Գծապատկերներ 2.1 – 2.12

Գծապատկեր 2.1. Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք բավարարված ՏԻՄ-երի աշխատանքից



Գծապատկեր 2.2. Որքա՞ն արագ են արձագանքում հետևյալ անձինք Ձեր բարձրաձայնած մտահոգությանը (% ամբողջի մեջ)



Գծապատկեր 2.3. Որքանո՞վ է հեշտ կամ դժվար հետևյալ անձանց առջև բարձրաձայնել Ձեր մտահոգությունը (% ամբողջի մեջ)



Գծապատկեր 2.4. ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները



Գծապատկեր 2.5. Ձեր կարծիքով, վերջին 6 ամիսների ընթացքում որքա՞ն հաճախ են Ձեր համայնքում բնակիչները ստիպված եղել նվեր մատուցել պաշտոնյաներից որևէ մեկին (գումարի, ապրանքի կամ լավության տեսքով)՝ հանրային ծառայություն ստանալու համար



Գծապատկեր 2.6. Հետևյալ գործոնները որքանո՞վ կարող են օգնել քաղաքացիներին՝ լուծելու իրենց խնդիրները ՏԻՄ-երի միջոցով



Գծապատկեր 2.7. Որքա՞ն լավ կամ վատ են կիրարկում ՏԻՄ-երը հետևյալ ընթացակարգերը



Գծապատկեր 2.8. Որքա՞ն կարևոր է, որ հետևյալ անձինք հաշվի առնեն մարդկանց կարծիքը



Գծապատկեր 2.9. Որքա՞ն հաճախ են հետևյալ անձինք լսում և հաշվի առնում մարդկանց կարծիքը



Գծապատկեր 2.10. Ըստ Ձեզ, որքան հաճախ պետք է համայնքի ղեկավարը հաղիպի իր ընտրազանգվածի հետ, որպեսզի քննարկի և համաձայնության գա համայնքի զարգացման ծրագրերի շուրջ



Գծապատկեր 2.11. Ըստ Ձեզ, որքան հաճախ պետք է համայնքի ղեկավարը հաղիպի իր ընտրազանգվածի հետ, որպեսզի տեղեկացնի ՏԻՄ-երի որոշումների մասին



Գծապատկեր 2.12. Ըստ Ձեզ, որքան հաճախ պետք է համայնքի ղեկավարը հաղիպի իր ընտրազանգվածի հետ, որպեսզի քննարկի տեղական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված քայլերը



Գծապատկեր 2.13. Վերջին 6 ամիսների ընթացքում որքա՞ն հաճախ է համայնքի ղեկավարը հանդիպել իր ընտրազանգվածի հետ, որպեսզի քննարկի և համաձայնության գա համայնքի զարգացման ծրագրերի շուրջ



Գծապատկեր 2.14. Վերջին 6 ամիսների ընթացքում որքա՞ն հաճախ է համայնքի ղեկավարը հանդիպել իր ընտրազանգվածի հետ, որպեսզի տեղեկացնի ՏԻՄ-երի որոշումների մասին



Գծապատկեր 2.15. Վերջին 6 ամիսների ընթացքում որքա՞ն հաճախ է համայնքի ղեկավարը հանդիպել իր ընտրազանգվածի հետ, որպեսզի քննարկի տեղական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված քայլերը



Գծապատկեր 2.16. Որքա՞ն եք վստահում հետևյալ անձանց



3. Քաղաքացիական մասնակցություն ՏԻՄ-երի գործունեությանը

Հարցմանը նախորդող վեց ամիսների ընթացքում հայաստանցիների միայն փոքր հատվածն է դիմել իր ՏԻՄ-երին որևէ խնդիր լուծելու նպատակով: Ընդ որում, այդ փոքր հատվածն ավելի հաճախ դիմել է անմիջապես համայնքի ղեկավարին՝ գերազանցապես անձնական խնդիրներով: Այսպես, նշված ժամանակահատվածում համայնքի ղեկավարին դիմել է հարցվածների 16.5 տոկոսը: Ավագանու որևէ անդամի դիմել է հարցվածների 5.1 տոկոսը, տեղական իշխանության որևէ այլ պաշտոնյայի՝ 4.5 տոկոսը: Համեմատության համար հարկ է նշել, որ նույն ժամանակահատվածում, թվով շատ ավելի քիչ հարցված հայաստանցի է դիմել Ազգային ժողովի իր պատգամավորին (1 տոկոս) կամ պետական որևէ այլ պաշտոնյայի (2.1 տոկոս) Գծապատկեր (3.1):

Հարցվածների շատ փոքր հատվածն է երբևիցե բողոքել իր համայնքի որևէ պաշտոնյայի անպատշաճ պահվածքից: Այսպես, համայնքի հանրային կապերի հանձնաժողով նման հարցով դիմել է հարցվածների 1.7 տոկոսը, բողոքների հանձնաժողով՝ 2.5 տոկոսը, էթիկայի հանձնաժողով՝ 0.9 տոկոսը: Միաժամանակ, հարցվածների շուրջ երկու երրորդը դժվարացել է պատասխանել՝ արդյոք իր ՏԻՄ-ում գոյություն ունեն հանրային կապերի, բողոքների և էթիկայի հանձնաժողովներ:

Ինչպես և նախորդ դեպքերում, հարցվածների չնչին հատվածն է որպես շահառու մասնակցել ՏԻՄ-երի աշխատանքներին: Այսպես, հարցմանը նախորդող վեց ամիսների ընթացքում իր համայնքի ավագանու նիստերին մասնակցել է հարցվածների միայն 2.4 տոկոսը, համայնքի քաղաքականությունների և ծրագրերի վերաբերյալ լսումների՝ 2.3 տոկոսը և համայնքի բյուջեի վերաբերյալ քննարկումների՝ 1.7 տոկոսը: Հարցվածների 0.4 տոկոսն է մասնակցել ԶԼՄ հարցազրույցի կամ հաղորդման տեղական որևէ խնդրի վերաբերյալ խոսելու նպատակով (Գծապատկեր 3.2):

Հարցվածների պասիվ մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը կարող է պայմանավորված լինել նրանց թերահավատությամբ այդ մասնակցության հնարավորության և արդյունավետության նկատմամբ: Այն հարցին, թե արդյոք իրենց համայնքներում առկա են տեղական ինքնակառավարմանը մասնակցելու բավարար հնարավորություններ, հարցվածների միայն 32.8 տոկոսն է դրական պատասխան տվել: Հարցվածների 33 տոկոսն ասել է, որ այդ հնարավորությունները բացակայում են, մինչդեռ 34 տոկոսը չի իմացել արդյոք մասնակցության բավարար հնարավորություններ առկա են, թե ոչ:

Միաժամանակ, հարցվածների 35.9 տոկոսն է գտնում, որ իր համայնքի անդամների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը «որոշ չափով» կամ «շատ» արդյունավետ է: Հարցվածների 32.6 տոկոսի կարծիքով այդ մասնակցությունը

կամ ընդհանրապես արդյունավետ չէ, կամ «քիչ» արդյունավետ է: Հարցվածների մնացյալ մեկ երրորդը (31.5 տոկոսը) չգիտի կամ դժվարանում է պատասխանել՝ արդյոք այդ մասնակցությունն արդյունավետ է, թե ոչ:

Հարցվածների ընկալմամբ, հարևան համայնքների բնակիչները տեղական ինքնակառավարմանը մասնակցելու առումով ավելի ակտիվ չեն (հետևաբար չեն կարող ծառայել որպես վարքագծային մոդել): Օրինակ՝ այն հարցին, թե «Հարևան համայնքների բնակիչներն ավելի ակտի՞վ են մասնակցում տեղական ինքնակառավարման գործընթացներին», հարցվածների 31.1 տոկոսը տվել է «ոչ» կամ «ավելի շուտ ոչ» պատասխանը, մինչդեռ կեսից ավելին՝ 55.1 տոկոսը, պարզապես դժվարացել է պատասխանել: Միայն 13.7 տոկոսն է այս հարցին տվել «այո» կամ «ավելի շուտ այո» պատասխանը:

Ներառական տեղական ինքնակառավարում

Հարցված հայաստանցիների ճնշող մեծամասնության կարծիքով աջակցության կարիք ունեցող սոցիալական մի շարք խմբեր պետք է լիարժեքորեն մասնակցեն տեղական ինքնակառավարման գործընթացներին: Այսպես, աղքատ և սոցիալապես խոցելի մարդիկ տեղական ինքնակառավարմանը պետք է լիարժեքորեն մասնակցեն հարցվածների 84.5 տոկոսի կարծիքով, հաշմանդամություն ունեցող մարդիկ՝ 83.5 և փախստականները՝ 79.9 տոկոսի կարծիքով (Գծապատկեր 3.3): Սակայն, հարցվածների մոտավորապես մեկ երրորդի կարծիքով է, որ նշված խմբերը լիարժեքորեն են մասնակցում տեղական ինքնակառավարմանը (Գծապատկեր 3.4):

Հարցված հայաստանցիների ճնշող մեծամասնության կարծիքով, կանայք և երիտասարդները ևս պետք է լիարժեքորեն մասնակցեն տեղական ինքնակառավարմանը: Կանանց համար այդպես է արտահայտվել հարցվածների 88.3 տոկոսը, երիտասարդների համար՝ 93.1 տոկոսը (Գծապատկեր 3.3): Միաժամանակ, հարցվածների մոտավորապես կեսի կարծիքով է, որ երիտասարդները և կանայք լիարժեքորեն են մասնակցում տեղական ինքնակառավարմանը (Գծապատկեր 3.4):

Մասնակցություն ՏԻՄ-երի ընտրություններին

Հարցված հայաստանցիների երկու երրորդը մասնակցել է վերջին ՏԻՄ-երի ընտրություններին: Այսպես՝ համայնքի ղեկավարի վերջին ընտրություններին քվեարկել է հարցվածների 75.1 տոկոսը, ավագանու անդամների վերջին ընտրություններին՝ 71.8 տոկոսը (Գծապատկեր 3.5): Համայնքի ղեկավարի ընտրություններում չքվեարկած բնակիչներն իրենց այդ քայլը բացատրել են ամենահաճախ հանդիպող հետևյալ երեք պատասխանով. «որոշեցի չքվեարկել» (33.6 տոկոս), «գրանցված չէի» (17.8 տոկոս) և «տեղյակ չէի» (9.4 տոկոս): Ավագանու ընտրություններին չքվեարկածները ևս ամենից հաճախ վկայակոչել են նույն երեք պատճառը՝ «որոշեցի չքվեարկել» (35.1 տոկոս), «գրանցված չէի» (15 տոկոս) և «տեղյակ չէի» (12 տոկոս):

Ինչ վերաբերում է ընտրությունների հանդեպ մարդկանց վերաբերմունքին, հարցված հայաստանցիների շուրջ կեսը չի հավատացել կամ չի վստահել ՏԻՄ վերջին ընտրությունների արդարությանը և թափանցիկությանը: Այն հարցին, թե «Ընդհանուր առմամբ արդար և թափանցի՞կ էին համայնքի ղեկավարի վերջին ընտրությունները», հարցվածների գրեթե կեսը՝ 47.3 տոկոսը, պատասխանել է «այո» կամ «ավելի շուտ այո», մինչդեռ 30.5 տոկոսը պատասխանել է «ոչ» կամ «ավելի շուտ ոչ»: Հարցվածների 22.2 տոկոսը դժվարացել է պատասխանել այդ հարցին (Գծապատկեր 3.6): Ավագանու ընտրությունների հետ կապված նույն հարցին «այո» կամ «ավելի շուտ այո» պատասխանը տվել է հարցվածների 45.2 տոկոսը, «ոչ» կամ «ավելի շուտ ոչ» պատասխանը՝ 30.3 տոկոսը (Գծապատկեր 3.6):

Միաժամանակ, հարցվածների 75 տոկոսը կարծիք է հայտնել, որ եթե համայնքի ղեկավարի ընտրությունները տեղի ունենային առաջիկա կիրակի, նրանք հաստատապես կամ ամենայն հավանականությամբ կմասնակցեին դրանց: Ավագանու ընտրությունների դեպքում, գրեթե նույնքան (74.5 տոկոս) հարցված հայաստանցի է ասել, թե հաստատապես կամ ամենայն հավանականությամբ կմասնակցեր դրանց:

Գծապատկերներ 3.1 – 3.6

Գծապատկեր 3.1. Վերջին 6 ամիսների ընթացքում կապվե՞լ եք հետևյալ անձանց անձնական կամ համայնքային խնդրի վերաբերյալ



Գծապատկեր 3.2. Վերջին 6 ամիսների ընթացքում մասնակցե՞լ եք հետևյալ միջոցառումներին



Գծապատկեր 3.3. Այս խմբերը պե՞տք է լիարժեքորեն մասնակցեն տեղական ինքնակառավարմանը



Գծապատկեր 3.4. Իսկ նրանց մասնակցությունը լիարժե՞ք է



Գծապատկեր 3.5. Վերջին ընտրություններին քվեարկե՞լ եք՝ ընտրելու …



Գծապատկեր 3.6. Ընդհանուր առմամբ արդար և թափանցի՞կ էին հետևյալ անձանց վերջին ընտրությունները



4. Քաղաքացիական ակտիվություն և քաղաքական մասնակցություն

Անդամակցություն

Հարցված հայաստանցիների չնչին տոկոսն է անդամակցում որևէ ֆորմալ կամ ոչ ֆորմալ կազմակերպության: Այսպես, հարցման պահին որևէ հասարակական կամ համայնքային կազմակերպության/ասոցիացիայի ակտիվ կամ պասիվ անդամ է հանդիսացել հարցվածների ընդամենը 1.5 տոկոսը, քաղաքացիական ակտիվիստների որևէ խմբի անդամ՝ 0.6 տոկոսը: Քաղաքական կուսակցություններին անդամակցության աստիճանը փոքր-ինչ ավելի բարձր է. կուսակցությունների ակտիվ անդամ են հանդիսացել հարցվածների 2.1 տոկոսը, պասիվ անդամ՝ 6.7 տոկոսը (Գծապատկեր 4.1):

Մասնակցություն

Հարցմանը նախորդող վեց ամիսների ընթացքում պասիվ է եղել հարցված հայաստանցիների մասնակցությունը նաև քաղաքացիական միջոցառումներին: Օրինակ՝ հարցվածների միայն 1.8 տոկոսն է մասնակցել որևէ հասարակական կազմակերպության նախաձեռնած քննարկման կամ հանդիպման: Նշված ժամանակահատվածում հարցվածների 2.1 տոկոսն է մասնակցել բողոքի ցույցի կամ երթի (տե՛ս նախորդ բաժնի Գծապատկեր 3.2-ը): Հետաքրքիր է, որ բողոքի ցույցի կամ երթի մասնակիցների (N=30) կեսից ավելիի կարծիքով այդ միջոցառումները «որոշ չափով» կամ «շատ» արդյունավետ են եղել (Գծապատկեր 4.2):

Հարցմանը մասնակցած հայաստանցիների 92.6 տոկոսը քաղաքացիական կրթության որևէ դասընթացի մասին տեղյակ չի եղել: Տեղյակ է եղել 7.4 տոկոսը (N=108): Վերջիններիս 43 տոկոսն է երբևիցե մասնակցել նման դասընթացի. կեսից ավելին՝ 57 տոկոսը, երբևիցե չի մասնակցել:

Վերաբերմունք քաղաքացիական ակտիվության նկատմամբ

Հարցվածների ճնշող մեծամասնությունը դրական վերաբերմունք ունի կամավորության նկատմամբ: Օրինակ՝ կամավոր աշխատանք կատարելը քաղաքացու համար «կարևոր» կամ «շատ կարևոր» է համարել հարցվածների 78.7 տոկոսը: Միաժամանակ, հարցված հայաստանցիների 92.6 տոկոսը հայտարարել է, որ քաղաքացու համար «կարևոր» կամ «շատ կարևոր» է, որ նա աջակցի ավելի վատ վիճակում գտնվող մարդկանց (Գծապատկեր 4.3):

Քաղաքական մասնակցություն

Հարցված հայաստանցիների ճնշող մեծամասնությունը հարցմանը նախորդող վեց ամիսների ընթացքում քաղաքականապես ակտիվ է եղել: Այսպես, հարցվածների

84 տոկոսը հայտարարել է, որ նշված ժամանակահատվածում քվեարկել է երկրի նախագահի ընտրություններին: Հարցվածների 73.8 տոկոսը հայտարարել է, որ քվեարկել է Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ (Գծապատկեր 3.5): Երկրի նախագահի ընտրություններում չքվեարկած բնակիչներն իրենց այդ քայլը բացատրել են ամենահաճախ հանդիպող հետևյալ երեք պատասխանով. «որոշեցի չքվեարկել» (35.2 տոկոս), «գրանցված չէի» (20.1 տոկոս) և «դեռ չափահաս չէի» (9.1 տոկոս): Ազգային ժողովի պատգամավորի ընտրություններին չքվեարկածներն ամենից հաճախ վկայակոչել են հետևյալ երեք պատճառը՝ «որոշեցի չքվեարկել» (39.2 տոկոս), «գրանցված չէի» (14.5 տոկոս) և «տեղյակ չէի» (8.8 տոկոս):

Հարցմանը մասնակցած հայաստանցիների կեսից ավելին չի հավատացել կամ չի վստահել երկրի նախագահի և Ազգային ժողովի պատգամավորի վերջին ընտրությունների արդարությանը և թափանցիկությանը: Այն հարցին, թե «Ընդհանուր առմամբ արդար և թափանցի՞կ էին երկրի նախագահի վերջին ընտրությունները», հարցվածների 43.1 տոկոսը պատասխանել է «ոչ» կամ «ավելի շուտ ոչ», մինչդեռ 19.5 տոկոսը պատասխանել է «չգիտեմ» կամ «դժվարանում եմ պատասխանել»: Հարցվածների 36.8 տոկոսը նույն հարցին պատասխանել է «այո» կամ «ավելի շուտ այո»: Ազգային ժողովի ընտրությունների արդարության և թափանցիության վերաբերյալ նույն հարցին, հարցվածների 38.8 տոկոսն է պատասխանել «ոչ» կամ «ավելի շուտ ոչ», մինչդեռ 24.5 տոկոսը պատասխանել է «չգիտեմ» կամ «դժվարանում եմ պատասխանել»: Հարցվածների 36.8 տոկոսը պատասխանել է «այո» կամ «ավելի շուտ այո» (Գծապատկեր 3.6):

Միաժամանակ, հարցվածների 75.4 տոկոսը կարծիք է հայտնել, որ եթե երկրի նախագահի ընտրությունները տեղի ունենային առաջիկա կիրակի, նրանք հաստատապես կամ ամենայն հավանականությամբ կմասնակցեին դրանց: Ավագանու ընտրությունների դեպքում, հարցվածների 73.9 տոկոսն է ասել, թե հաստատապես կամ ամենայն հավանականությամբ կմասնակցեր դրանց:

Գծապատկերներ 4.1 – 4.3

Գծապատկեր 4.1. Ի՞նչ կարգավիճակով եք անդամակցում



Գծապատկեր 4.2. Արդյոք հետևյալ միջոցառումներն արդյունավե՞տ էին (% ամբողջի մեջ)


Շատ
Որոշ չափով
Շատ քիչ
Ոչ
ՉԳ/ԴՊ
Համայնքի քաղաքականությունների, ծրագրերի և պլանների քննարկման
54.5
39.4
6.1
Համայնքի բյուջեի վերաբերյալ լսումների/քննարկումների
54.2
41.7
4.2
ՀԿ-(ներ)ի կազմակերպած խնդիրների քննարկման կամ այլ հանդիպումների
46.2
46.2
3.8
Համայնքի ավագանու նիստերի
40
48.6
5.7
5.7
Տեղական խնդրի վերաբերյալ ԶԼՄ հարցազրույցի կամ հաղորդման
33.3
33.3
16.7
16.7
Բողոքի ցույցի կամ երթի
27.6
27.6
17.2
24.1

Գծապատկեր 4.3. Ձեր կարծիքով, որքանո՞վ է կարևոր, որ քաղաքացին



5. Լրատվության աղբյուրները

Հարցված հայաստանցիներն ամենից շատ օգտվում են հեռուստատեսությունից: Այսպես, հարցվածների 82.5 տոկոսի փոխանցմամբ, հանրապետական հեռուստատեսությունից նրանք օգտվում են ամեն օր: Երկրորդ տեղում ռուսական հեռուստաալիքներն են, որոնցից ամեն օր օգտվում է հարցվածների 51.4 տոկոսը: Տեղական հեռուստաալիքներից ամեն օր օգտվում է հարցվածների 37.1 տոկոսը: Միաժամանակ, հարցվածների շուրջ մեկ երրորդը՝ 31.6 տոկոսը, ասել է, որ ամեն օր օգտվում է սոցիալական ցանցերից կամ համացանցային այլ ռեսուրսներից: Զգալիորեն փոքր է հայկական լրագրերից և հանրապետական ռադիոյից ամեն օր օգտվող հարցված հայաստանցիների թիվը՝ կազմելով համապատասխանաբար 9.8 և 6.9 տոկոս (Գծապատկեր 5.1):

Հանրապետական հեռուստատեսությունը որպես տեղեկատվության աղբյուր ավելի շատ օգտագործվում է ավագ տարիքի մարդկանց շրջանում: Այսպես, 65 տարեկանից բարձր հարցվածների (N=310) 82.5 տոկոսն է հայտարարել, որ ամեն օր օգտվում է հանրապետական հեռուստատեսությունից, մինչդեռ 18-25 տարեկան հարցվածների (N=127)՝ 67.7 տոկոսը:

Համացանցի օգտագործումը որպես լրատվության աղբյուր ավելի հաճախ հանդիպող երևույթ է երիտասարդների շրջանում: Այսպես, 18-25 տարեկան հարցվածների 59.8 տոկոսն է ասել, որ ամեն օր օգտագործում է համացանցը, 65 տարեկանից բարձր հարցվածների՝ ընդամենը 6.4 տոկոսը:

Հայաստանում համացանցի օգտագործումը ասոցացված է նաև կրթության մակարդակի հետ. որքան բարձր է վերջինս, այնքան ավելի հաճախակի է համացանցի օգտագործումը: Օրինակ՝ եթե միջնակարգ կրթություն ունեցող հարցվածների (N=521) 24.8 տոկոսն է հայտարարել, որ ամեն օր օգտվում է համացանցից, ապա բարձրագույն կրթություն ունեցող հարցվածների (N=353) դեպքում այդ ցուցանիշը կրկնակի բարձր է՝ 53.8 տոկոս: Միաժամանակ հետբուհական գիտական աստիճան ունեցող հարցվածների (N=15) 73.3 տոկոսն է հայտարարել, որ ամեն օր օգտվում է համացանցից:

Հեռուստատեսությունն առաջնային է նաև մեկ այլ առումով: Այս աղբյուրից են հարցված հայաստանցիներն ամենից շատ տեղեկություններ ստանում ՏԻՄ-երի, սոցիալական ծառայությունների և հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ: Այսպես, հարցվածների 55.1 տոկոսն է հայտնել, որ նշված ոլորտների բարեփոխումների մասին հանրապետական հեռուստատեսությունից տեղեկանում է շաբաթն առնվազն մեկ-երկու անգամ: Նույն ոլորտների վերաբերյալ նույն հաճախականությամբ տեղական հեռուստատեսություններից տեղեկանում է հարցվածների 26.3 տոկոսը, համացանցից՝ 21.5 տոկոսը: Ընդ որում, բարեփոխումների վերաբերյալ հանրապետական հեռուստատեսության տված

լրատվությունից «լիովին», «շատ» կամ «որոշ չափով» բավարարված են հարցվածների կեսից ավելին՝ 53.6 տոկոսը, տեղական հեռուստատեսությունների լրատվությունից՝ 60.4 տոկոսը և համացանցի լրատվությունից՝ 62.9 տոկոսը (Գծապատկեր 5.2):

Հարցված հայաստանցիներն ամենաշատը բավարարված են հանրապետական ռադիոյի լրագրողների էթիկայով: Մասնավորապես, հարցվածների 35.3 տոկոսն է «շատ» կամ «լիովին» բավարարված եղել նրանց էթիկայով. «որոշ չափով» բավարարված է եղել 39.7 տոկոսը: Հանրապետական հեռուստատեսության լրագրողների էթիկայով «շատ» կամ «լիովին» բավարարված է եղել հարցվածների 28.4 տոկոսը, «որոշ չափով»՝ 46.1 տոկոսը: Համացանցային լրագրողների էթիկայով «շատ» կամ «լիովին» բավարարվածների թիվն ավելի փոքր է եղել՝ 19.5 տոկոս, «որոշ չափով» բավարարվածներինը՝ 49.1 տոկոս (Գծապատկեր 5.3):

Չնայած այն հանգամանքին, որ հարցվածներն ամենից հաճախ օգտվում են հանրապետական հեռուստատեսությունից, նրանց ընդամենը 12.5 տոկոսն է ասել, որ «շատ» կամ «լիովին» է վստահում այս լրատվամիջոցին. վերջինիս «որոշ չափով» վստահում է 45.5 տոկոսը: Տեղական հեռուստատեսություններին «շատ» կամ «լիովին» վստահում է հարցվածների 17.4 տոկոսը, «որոշ չափով»՝ 43.2 տոկոսը: Տեղական լրագրերին «շատ» կամ «լիովին» վստահում է հարցվածների 12 տոկոսը, «որոշ չափով»՝ 52.1 տոկոսը: Համացանցին և սոցիալական ցանցերին «շատ» կամ «լիովին» վստահում է հարցվածների 18.9 տոկոսը, «որոշ չափով»՝ 47.2 տոկոսը:

Սոցիալական ցանցեր

Հարցվածների 43 տոկոսը հայտարարել է, որ օգտվում է սոցիալական ցանցերից. մնացած 57 տոկոսը՝ չի օգտվում: Ամենից հաճախ օգտագործվում է «Ֆեյսբուք» (Facebook) սոցիալական ցանցը (օգտվողների 69.2 տոկոսը): Երկրորդ տեղում «Օդնոկլասնիկի» (Одноклассники) սոցիալական ցանցն է (65.9 տոկոս), իսկ երրորդում՝ «Թվիթերը» (Twitter) (6.3 տոկոս, Գծապատկեր 5.4):

«Ֆեյսբուքի» օգտատերերի (N=430) 39.5 տոկոսը հայտարարել է, որ այս ցանցն օգտագործում է սոցիալական և/կամ քաղաքական տեղեկատվություն տարածելու նպատակով: Նույն նպատակների համար «Օդնոկլասնիկը» կիրառում են այս ցանցի օգտատերերի (N=409) 32.7 տոկոսը (Գծապատկեր 5.4.1):

Գծապատկերներ 5.1 – 5.4.1

Գծապատկեր 5.1. Որքա՞ն հաճախ եք օգտվում այս աղբյուրներից



Գծապատկեր 5.2. Որքա՞ն եք բավարարված բարեփոխումների մասին հետևյալ աղբյուրների լրատվությամբ



Գծապատկեր 5.3. Որքա՞ն եք բավարարված հետևյալ լրատվամիջոցների լրագրողների էթիկայով (% ամբողջի մեջ)



Գծապատկեր 5.4. Ո՞ր սոցիալական ցանցերից եք օգտվում (% ամբողջի մեջ)



Գծապատկեր 5.4.1. Օգտագործո՞ւմ եք հետևյալ սոցիալական ցանցերը քաղաքական կամ սոցիալական տեղեկատվություն տարածելու նպատակով (% ամբողջի մեջ):



6. Վերաբերմունք հասարակական և միջազգային կազմակերպությունների հանդեպ

Հարցվածների փոքր մասն է վստահում հասարակական կազմակերպությունների (ՀԿ) ներկայացուցիչներին. ՀԿ ներկայացուցիչներին «շատ» կամ «լիովին» վստահել է հարցվածների 6.7 տոկոսը: ՀԿ ներկայացուցիչներին «ոչ շատ, ոչ քիչ» վստահում է 21.4 տոկոսը, մինչդեռ «ամենևին» չի վստահում 38.9 տոկոսը (Տես Գծապատկեր 2.12-ը սույն Զեկույցի երկրորդ բաժնում):

Հարցվածների 83.6 տոկոսը հայտարարել է, որ «կարևոր» կամ «շատ կարևոր» է, որ ՀԿ ներկայացուցիչները հաշվի առնեն մարդկանց կարծիքը (Գծապատկեր 2.8): Սակայն, հարցվածների 17.1 տոկոսն է ասել, թե ՀԿ-ների ներկայացուցիչները հաճախ կամ միշտ լսում են մարդկանց կարծիքը: Հարցվածների 22.5 տոկոսի կարծիքով, ՀԿ ներկայացուցիչները դա անում են երբեմն: Հարցվածների 35.9 տոկոսը հայտարարել է, որ ՀԿ ներկայացուցիչները մարդկանց կարծիքը երբեք չեն լսում (Գծապատկեր 2.9):

Հարցված հայաստանցիների փոքր տոկոսն է գտնում, որ ՀԿ-ները լիարժեքորեն են ներկայացնում հասարակության մի շարք խոցելի խմբերի շահերը: Այսպես, ՀԿ-ները հաշմանդամություն ունեցող մարդկանց շահերը «շատ» կամ «լիովին» ներկայացնում են հարցվածների 5.2 տոկոսի, աղքատ մարդկանց շահերը՝ 3.6 տոկոսի և փախստականների շահերը՝ 4.3 տոկոսի կարծիքով: Միաժամանակ, ՀԿ-ները հաշմանդամություն ունեցող մարդկանց շահերը «որոշ չափով» ներկայացնում են հարցվածների 28.2 տոկոսի, աղքատ մարդկանց շահերը՝ 24.7 տոկոսի և փախստականների շահերը՝ 23.9 տոկոսի կարծիքով (Գծապատկեր 6.1):

Ըստ հարցվածների մոտ 8 տոկոսի, ՀԿ-ները «լիովին» կամ «շատ» ներկայացնում են երիտասարդների և կանանց շահերը: ՀԿ-ները երիտասարդների և կանանց շահերը «որոշ չափով» ներկայացնում են հարցվածների համապատասխանաբար 29.1 և 30.7 տոկոսի կարծիքով (Գծապատկեր 6.1):

Հարցվածների կեսից ավելին՝ 60.3 տոկոսը, դժվարացել է գնահատել ՀԿ-ների հաշվետվողականության մակարդակը: Հարցվածների 16.4 տոկոսն այդ մակարդակը գնահատել է «ցածր» կամ «շատ ցածր», 4.2 տոկոսը՝ «բարձր» կամ «շատ բարձր», իսկ 19.1 տոկոսը՝ «ոչ ցածր, ոչ բարձր» (Գծապատկեր 6.2): Հարցվածների կեսից ավելին՝ 63.7 տոկոսը, նաև դժվարացել է պատասխանել, արդյոք հարցմանը նախորդող տարվա համեմատ ՀԿ-ների հաշվետվողականության մակարդակն աճել է, թե նվազել: Հարցվածների 24.7 տոկոսի կարծիքով այդ մակարդակը ո՛չ նվազել է, ո՛չ աճել, մինչդեռ 5.5 տոկոսի կարծիքով այն նվազել է, 5.9 տոկոսի կարծիքով՝ աճել:

Հարցվածների գրեթե կեսը՝ 49.8 տոկոսը, դժվարացել է գնահատել նաև ՀԿ-ների աշխատանքի թափանցիկության մակարդակը: Հարցվածների 20.7 տոկոսի կարծիքով այդ մակարդակը «ցածր» կամ «շատ ցածր» է, 6.7 տոկոսի կարծիքով՝

«բարձր» կամ «շատ բարձր»: Հարցվածների 22.7 տոկոսը տվել է չեզոք «ո՛չ բարձր, ո՛չ ցածր» գնահատականը (Գծապատկեր 6.3): Միաժամանակ, հարցվածների կեսից ավելին՝ 56 տոկոսը, դժվարացել է պատասխանել արդյոք հարցմանը նախորդող տարվա համեմատ ՀԿ-ների թափանցիկության մակարդակն աճել է, թե նվազել: Հարցվածների 33.4 տոկոսի կարծիքով այդ մակարդակը ո՛չ նվազել է, ո՛չ աճել, մինչդեռ 4.4 տոկոսի կարծիքով այն նվազել է, 6.2 տոկոսի կարծիքով՝ աճել:

Միջազգային կազմակերպություններ

Հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 83.3 տոկոսը, հայտարարել է, որ տեղյակ չէ իր համայնքում որևէ միջազգային կազմակերպության կողմից իրականացվող զարգացման որևէ ծրագրի մասին: Հարցվածների միայն 13 տոկոսն է պատասխանել, որ տեղյակ է (Գծապատկեր 6.4): Միաժամանակ, այդպիսի ծրագրերին տեղյակ հայաստանցիների ճնշող մեծամասնությունը՝ 84.6 տոկոսը, դրական է գնահատել իր համայնքում այդ ծրագրերի հարուցած փոփոխությունները (Գծապատկեր 6.4.1):

Գծապատկերներ 6.1 – 6.4.1

Գծապատկեր 6.1. Որքանո՞վ են հասարակական կազմակերպությունները ներկայացնում հետևյալ խմբերի շահերը



Գծապատկեր 6.2. Ինչպե՞ս կգնահատեք հասարակական կազմակերպությունների հաշվետվողականության մակարդակը



Գծապատկեր 6.3. Ինչպե՞ս կգնահատեք հասարակական կազմակերպությունների գործունեության թափանցիկությունը



Գծապատկեր 6.4. Տեղյա՞կ եք արդյոք միջազգային կազմակերպությունների կողմից Ձեր համայնքում իրականացվող զարգացման որևէ ծրագրի մասին



Գծապատկեր 6.4.1. Ինչպե՞ս կգնահատեք Ձեր համայնքում այդ ծրագր(եր)ի հարուցած փոփոխությունը (% ամբողջի մեջ)



Հիմնական բացահայտումներ և առաջարկներ տեղական ինքնակառավարման ոլորտի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգը գտնվում է բարեփոխումների փուլում: Վերջիններիս արդյունավետությունը որոշելու համար չափազանց կարևոր է հասկանալ այդ բարեփոխումների գլխավոր շահառուների, այն է՝ համայնքների բնակիչների արձագանքը տեղական ինքնակառավարման ոլորտում առկա իրավիճակի և պարբերաբար տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ: Սույն զեկույցի հեղինակներն անհրաժեշտ են համարում ստորև ներկայացված միջոցառումների իրականացումը՝ տեղական ինքնակառավարման համակարգում ընթացող բարեփոխումների արդյունավետության մակարդակը բարձրացնելու համար:

- **Բարձրացնել բնակիչների իրազեկության մակարդակը տեղական ինքնակառավարման վերաբերյալ:**
- Ըստ հարցման արդյունքների, հայաստանցիների ճշնող մեծամասնությունն անհաղորդ է մնում ՏԻՄ-երի ընդունած որոշումներին: Նրանց ճնշող մեծամասնությունը նաև տեղյակ չէ տեղական ինքնակառավարմանը վերաբերող հայաստանյան օրենսդրությանը: Հայաստանցիները, որպես կանոն, հետաքրքրված չեն տեղական ինքնակառավարման համակարգում տեղի ունեցող բարեփոխումներով, մասնավորապես՝ ապակենտրոնացման և համայնքների խոշորացման գործընթացներով:
- ՏԻՄ-երի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար, հարցված հայաստանցիներն ամենից հաճախ օգտվում են հանրապետական և տեղական հեռուստատեսություններից, ինչպես նաև համացանցից: Միաժամանակ, հարցվածների փոքր մասն է բավարարված նշված աղբյուրների՝ տեղական ինքնակառավարմանն առնչվող բարեփոխումների վերաբերյալ մատուցած տեղեկատվությամբ:
- **Բարձրացնել ՏԻՄ-երի աշխատանքի արդյունավետությունը:**
- ՏԻՄ-երի աշխատանքից լիարժեքորեն բավարարված է հարցված հայաստանցիների տասից մեկը: Նրանց մոտ կեսը միայն որոշ չափով է բավարարված այդ աշխատանքից: Հարցված հայաստանցիներն ավելի շատ գոհ են ՏԻՄ-երի՝ համայնքները մաքուր պահելու աշխատանքից, ավելի քիչ՝ շրջակա միջավայրը և բնական ռեսուրսները պահպանելու, առողջապահության չափորոշիչների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և տեղական ճանապարհները և կամուրջները պահպանելու աշխատանքներից:

- **Բարձրացնել ՏԻՄ-երի նկատմամբ բնակչության վստահության մակարդակը:**
- Հարցված հայաստանցիների մեկ երրորդից քիչ ավելին է վստահում իրենց համայնքների ղեկավարներին: Վստահությունն ավագանու անդամների նկատմամբ ավելի ցածր է:
- Հարցմանը մասնակցած հայաստանցիների շատ փոքր հատվածն է գոհ իր ՏԻՄ-երի հաշվետվողականության մակարդակից: Փոքր է նաև այն հարցվածների թիվը, որոնք բարձր են գնահատում իրենց ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը: Մասնավորապես, հայաստանցիները դժգոհ են ՏԻՄ-երի ֆինանսական գործունեության և որոշումների կայացման թափանցիկությունից:
- Հարցված հայաստանցիները թերահավատ են ՏԻՄ-երի միջոցով իրենց իրավունքներն իրացնելու հավասար հնարավորությունների հանդեպ: Նրանց մեծամասնության կարծիքով, ՏԻՄ-երում խնդիրներ լուծելու համար կարևոր գործոն են հանդիսանում կաշառքը, սոցիալական դիրքը, պաշտոնը և կապերը:
- **Բարձրացնել համայնքների բնակչության ներգրավվածության մակարդակը ՏԻՄ-երի աշխատանքներում:**
- Հարցված հայաստանցիների միայն փոքր հատվածն է դիմում ՏԻՄ-եր՝ որևէ խնդիր լուծելու նպատակով: Թեև ՏԻՄ-եր դիմող քաղաքացիների թիվը փոքր է, վերջիններիս բավարարվածության աստիճանը ՏԻՄ-երի արձագանքից բավականին բարձր է:
- Հարցված հայաստանցիների չնչին հատվածն է որպես շահառու մասնակցում ՏԻՄ-երի աշխատանքներին: Հարցմանը նախորդող վեց ամիսների ընթացքում համայնքի ավագանու նիստերի, համայնքի ծրագրերի կամ բյուջեի վերաբերյալ լսումների ու քննարկումների մասնակցել են հատուկենտ հայաստանցիներ:
- Հարցված հայաստանցիների մասնակցությունը ՏԻՄ-երի ընտրություններին բավականին բարձր է: Հարցմանը նախորդող վերջին ընտրություններին (համայնքի ղեկավարի և ավագանու անդամների) մասնակցել է հարցվածների մոտավորապես երեք քառորդը: Սակայն լուրջ խնդիրներ կան այդ ընտրությունների նկատմամբ մարդկանց վստահության տեսանկյունից: Հարցվածների շուրջ կեսը չի վստահել ՏԻՄ-երի վերջին ընտրությունների արդարությանը և թափանցիկությանը:

«ՀԱՄԱՏԵՂ» համաթիվ

«ՀԱՄԱՏԵՂ» համաթիվը (ինդեքս) հետևյալ երեք (ոչ զումարելի)[15] ենթահամաթվերի միասնությունն է. ա) «Իրազեկություն տեղական ինքնակառավարման ոլորտի վերաբերյալ» ենթահամաթիվ, բ) «Քաղաքացիական մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» ենթահամաթիվ, և գ) «Գոհունակություն ՏԻՄ-երի աշխատանքից» ենթահամաթիվ:

Ենթահամաթվերը հաշվարկելիս օգտագործվել է «կշռված միջինի» սկզբունքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միևնույն ենթահամաթվի մեջ ընդգրկված հարցերը ոչ միշտ են միևնույն քանակի պատասխաններ ունեցել[16] (օրինակ՝ հարցերից մեկին պատասխանել է 1443, իսկ մյուսին՝ 348 հարցվող)՝ փոփոխականներին տրվել է համապատասխան կշիռ՝ ելակետ ունենալով հարցման առավելագույն հնարավոր պատասխանների քանակը (1443):

ա) ***«Իրազեկություն տեղական ինքնակառավարման ոլորտի վերաբերյալ» ենթահամաթիվը*** ցույց է տալիս՝ հարցվածների որ մասն է իրազեկ տեղական ինքնակառավարման համակարգի վերաբերյալ: Այս ենթահամաթիվը կարող է ընդունել արժեքներ «0»-ից (հարցվածներից որևէ մեկը իրազեկ չէ) մինչև «1»-ը (բոլոր հարցվածներն իրազեկ են) միջակայքում: Օրինակ՝ «0.15» ցուցանիշը նշանակում է, որ հարցվածների 15 տոկոսն ունի գիտելիքներ տեղական ինքնակառավարման համակարգի մասին:

ԵՆԹԱՀԱՄԱԹԻՎ Ա
0.16

Այս ենթահամաթվի հաշվարկման համար օգտագործվել են *Հավելված 1* բաժնում ներկայացված *Աղյուսակ 1*-ի հարցերը:

բ) «Քաղաքացիական մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» ենթահամաթիվը ցույց է տալիս՝ հարցվածների որ մասն է մասնակցում տեղական ինքնակառավարմանը: Այս ենթահամաթիվը կարող է ընդունել արժեքներ «0»-ից (հարցվածներից որևէ մեկը չի մասնակցում) մինչև «1»-ը (բոլոր հարցվածները մասնակցում են) միջակայքում: Օրինակ՝ «0.25» ցուցանիշը նշանակում է, որ

[15] Մեթոդաբանական տեսանկյունից խնդրո առարկա ենթահամաթվերը նպատակահարմար չէ միավորել մեկ համաթվի մեջ, քանի որ առաջին երկուսը ցույց են տալիս հաճախականություն, իսկ երրորդը՝ ինտենսիվություն/ուժգնություն:

[16] Պատասխանների տարբեր քանակը պայմանավորված է եղել նաև հարցաշարի կառուցվածքով:

հարցվածների 25 տոկոսն այս կամ այն կերպ մասնակցում է տեղական ինքնակառավարմանը:

ԵՆԹԱՀԱՄԱԹԻՎ Բ
0.18

Այս ենթահամաթվի հաշվարկման համար օգտագործվել են *Հավելված 1* բաժնում ներկայացված *Աղյուսակ 2*-ի հարցերը:

գ) «Գոհունակություն ՏԻՄ-երի աշխատանքից» ենթահամաթիվը ցույց է տալիս հարցվածների գնահատականը ՏԻՄ-երի հաշվետվողականության, թափանցիկության և արագ արձագանքման վերաբերյալ: Այս ենթահամաթիվը կարող է ընդունել արժեքներ «0»-ից (հարցվածներն ընդհանրապես արդյունավետ չեն համարում ՏԻՄ-երի աշխատանքը) մինչև «2»-ը (հարցվածները չափազանց արդյունավետ են համարում ՏԻՄ-երի աշխատանքը) միջակայքում:

ԵՆԹԱՀԱՄԱԹԻՎ Գ
0.6

Այս ենթահամաթվի հաշվարկման համար օգտագործվել են *Հավելված 1* բաժնում ներկայացված *Աղյուսակ 3*-ի հարցերը:

Հավելված 1. «ՀԱՄԱՏԵՂ» համաթվի հիմքում ընկած փոփոխականներ

Աղյուսակ 1. «Իրազեկություն տեղական ինքնակառավարման ոլորտի վերաբերյալ» ենթահամաթիվ

	Դիտարկում-ների քանակ	Նվազագույն արժեք	Առավելա-գույն արժեք	Թվաբանական միջին	Ստանդարտ շեղում
Ձեր համայնքի ավագանու անդամներից քանիսի՞ն եք ճանաչում:	1436	0	1	.52	.500
Ձեր կարծիքով, ո՞վ/ովքե՞ր են կարող կասեցնել ավագանու անդամի մանդատը: Ավագանին	1361	0	1	.14	.351
Գիտե՞ք արդյոք Ձեր համայնքի 2015 թվականի բյուջեի չափը:	1345	0	1	.02	.152
Գիտե՞ք արդյոք՝ ուր են ՏԻՄ-երն ուղղում տեղական հարկերից, տուրքերից, վճարներից, տույժ-տուգանքներից ստացված եկամուտները:	1443	0	1	.27	.442
Արդյոք տեղյա՞կ եք կառավարման ապակենտրոնացման մասին:	1443	0	1	.10	.298
Արդյոք տեղյա՞կ եք համայնքների խոշորացման գործընթացի մասին:	1443	0	1	.41	.492
Ծանո՞թ եք արդյոք տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցությունը կարգավորող որևէ օրենքի կամ կարգի:	1443	0	1	.06	.244
Ծանո՞թ եք արդյոք Ձեր ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումներին:	1443	0	1	.13	.341
Գիտե՞ք արդյոք կառավարության կողմից ՏԻՄ-երի գործունեության գնահատման որևէ գործիք:	1431	0	1	.03	.176
Գիտե՞ք, թե ՏԻՄ-երի կողմից ինչպես են սահմանվում տեղական հարկերի, տուրքերի, վճարների, տույժ-տուգանքների դրույքաչափերը:	1428	0	1	.08	.270
Իսկ տեղյա՞կ եք դրանց մասին: Իշխանության ապակենտրոնացում	348	0	1	.05	.227
Տեղյա՞կ եք ՏԻՄ-երի հաշվետվողականության վերաբերյալ օրենքի մասին:	1400	0	1	.05	.227

Աղյուսակ 2. «Քաղաքացիական մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» ենթահամաթիվ

	Դիտարկում-ների քանակ	Նվազագույն արժեք	Առավելա-գույն արժեք	Թվաբանական միջին	Ստանդարտ շեղում
Կցանկանայի՞ք ընդգրկվել դրանցից որևէ մեկում:	418	0	1	.09	.291
Երբևէ վերահսկե՞լ եք Ձեր ՏԻՄ-երի ընդունած որևէ կանոնակարգի իրականացումը:	1443	0	1	.04	.201
Վերջին 6 ամիսների ընթացքում կապվե՞լ եք. անձնական կամ համայնքային խնդրի վերաբերյալ.Ձեր համայնքի ղեկավար	1443	0	1	.16	.371
Վերջին 6 ամիսների ընթացքում կապվե՞լ եք անձնական կամ համայնքային խնդրի վերաբերյալ. Ձեր ավագանու անդամ	1443	0	1	.05	.219
Վերջին 6 ամիսների ընթացքում կապվե՞լ եք անձնական կամ համայնքային խնդրի վերաբերյալ.Տեղական իշխանության այլ պաշտոնյա	1443	0	1	.05	.207
Վերջին 6 ամիսների ընթացքում մասնակցե՞լ եք հետևյալ միջոցառումներին. համայնքի ավագանու նիստերի	1443	0	1	.02	.154
Վերջին 6 ամիսների ընթացքում մասնակցե՞լ եք հետևյալ միջոցառումներին. համայնքի բյուջեի վերաբերյալ լսումների/քննարկումների	1443	0	1	.02	.128
Վերջին 6 ամիսների ընթացքում մասնակցե՞լ եք հետևյալ միջոցառումներին. համայնքի քաղաքականությունների, ծրագրերի և պլանների քննարկման	1443	0	1	.02	.150
Վերջին 6 ամիսների ընթացքում մասնակցե՞լ եք հետևյալ միջոցառումներին. տեղական խնդրի վերաբերյալ ԶԼՄ	1443	0	1	.00	.064

հարցազրույցի կամ հաղորդման					
Վերջին ընտրություններին քվեարկե՞լ եք՝ ընտրելու Համայնքի ղեկավար	1443	0	1	.75	.433
Վերջին ընտրություններին քվեարկե՞լ եք՝ ընտրելու Ավագանի	1439	0	1	.72	.449
Երբևէ մասնակցե՞լ եք համայնքային ծառայությունների մատուցման վերահսկողությանը:	1413	0	1	.05	.217
Ձեր համայնքում, ըստ Ձեզ, առկա՞ են բավարար հնարավորություններ՝ տեղական ինքնակառավարմանը մասնակցելու համար:	950	0	1	.50	.500

Աղյուսակ 3. «Գոհունակություն ՏԻՄ-երի աշխատանքից» ենթահամաթիվ

	Դիտարկում-ների քանակ	Նվազագույն արժեք	Առավելա-գույն արժեք	Թվաբանական միջին	Ստանդարտ շեղում
Ձեր համայնքի խնդիրների վերաբերյալ ավագանու որոշումների կայացման վրա որքանո՞վ է զգալի Կենտրոնական իշխանության ազդեցությունը	1037	0	2	.72	.718
Ձեր համայնքի խնդիրների վերաբերյալ ավագանու որոշումների կայացման վրա որքանո՞վ է զգալի Մարզային իշխանության ազդեցությունը	1025	0	2	.60	.663
Ձեր համայնքի խնդիրների վերաբերյալ ավագանու որոշումների կայացման վրա որքանո՞վ է զգալի Ազգային ժողովի պատգամավորների ազդեցությունը	1016	0	2	.97	.712
Ձեր համայնքի խնդիրների վերաբերյալ ավագանու որոշումների կայացման վրա որքանո՞վ է զգալի Երկրի նախագահի ազդեցությունը	1100	0	2	.75	.794
Ձեր համայնքի խնդիրների վերաբերյալ ավագանու որոշումների կայացման վրա որքանո՞վ է զգալի Համայնքի ղեկավարի ազդեցությունը	1183	0	2	.35	.589
Իսկ որքանո՞վ է հեշտ կամ դժվար նրանց առջև բարձրաձայնել Ձեր մտահոգությունը. Ձեր համայնքի ղեկավար	238	0	2	1.74	.579
Իսկ որքա՞ն արագ են նրանք արձագանքում. Ձեր համայնքի ղեկավար	237	0	2	1.49	.795
Իսկ որքանո՞վ է հեշտ կամ դժվար նրանց առջև բարձրաձայնել Ձեր մտահոգությունը. Ձեր ավագանու անդամ	73	0	2	1.78	.534
Իսկ որքա՞ն արագ են նրանք արձագանքում. Ձեր ավագանու անդամ	73	0	2	1.49	.766

Իսկ որքանո՞վ է հեշտ կամ դժվար նրանց առջև բարձրաձայնել Ձեր մտահոգությունը. Տեղական իշխանության այլ պաշտոնյա	65	0	2	1.42	.788
Իսկ որքա՞ն արագ են նրանք արձագանքում. Տեղական իշխանության այլ պաշտոնյա	65	0	2	.91	.897
Արդյոք դրանք արդյունավե՞տ էին. համայնքի ավագանու նիստերի	35	0	2	1.34	.591
Արդյոք դրանք արդյունավե՞տ էին. համայնքի բյուջեի վերաբերյալ լսումների/քննարկումների	24	1	2	1.54	.509
Արդյոք դրանք արդյունավե՞տ էին. համայնքի քաղաքականությունների, ծրագրերի և պլանների քննարկման	33	1	2	1.55	.506
Արդյոք դրանք արդյունավե՞տ էին. տեղական խնդրի վերաբերյալ ԶԼՄ հարցազրույցի կամ հաղորդման	5	1	2	1.40	.548
Վերջին 6ամ. ընթացքում, համ. ղեկավարը հանդիպել է, որպեսզի քննարկի և համաձայնության գալ համայնքի զարգացման ծրագրերի շուրջ	974	0	2	.42	.733
Վերջին 6ամ. ընթացքում, համ. ղեկավարը հանդիպել է, որպեսզի, տեղեկացնի ՏԻՄ-երի որոշումների մասին	954	0	2	.40	.719
Վերջին 6 ամ. ընթացքում, համ. ղեկավարը հանդիպել է, որպեսզի քննարկի տեղական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված քայլերը	963	0	2	.44	.753
Որքա՞ն եք վստահում հետևյալ անձանց. Համայնքի ղեկավար	1371	0	2	1.04	.872
Որքա՞ն եք վստահում հետևյալ անձանց. Ավագանու անդամ	1243	0	2	.83	.841

Որքա՞ն հաճախ են նրանք լսում և հաշվի առնում մարդկանց կարծիքը. Համայնքի ղեկավար	1313	0	2	.76	.879
Որքա՞ն հաճախ են նրանք լսում և հաշվի առնում մարդկանց կարծիքը. Ավագանու անդամ	1225	0	2	.59	.822
Ընդհանուր առմամբ՝ ինչպե՞ս կգնահատեք Ձեր ՏԻՄ-երի հաշվետվողականության մակարդակը:	828	0	2	.67	.692
ՏԻՄ-երի գործունեության մասին համայնքի բնակիչների իրազեկում	1184	0	2	.65	.742
Համայնքի բյուջեի մասին բնակիչների իրազեկում	1148	0	2	.37	.625
Տեղական որոշումների կայացման գործընթացի մեջ բնակիչների ներգրավում	1107	0	2	.51	.708
Տեղական պաշտոնյաների դեմ բողոքների կառավարում	889	0	2	.45	.674
Համայնքի եկամուտների արդար ու նպատակային օգտագործում	987	0	2	.63	.757
Բնակիչների հետ խորհրդակցություն՝ հանրային ռեսուրսների	1003	0	2	.57	.723
Գնումների կատարման թափանցիկություն, օրինակ՝ մրցույթների կազմակերպում	896	0	2	.53	.713
Ինչպե՞ս կգնահատեք ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը:	1168	0	2	.67	.736
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Համայնքի մաքրության պահպանում	1421	0	2	1.24	.808
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Կրթության, մշակույթի, սպորտի բնագավառների կառավարում	1168	0	2	1.28	.758

ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Տեղական ճանապարհների և կամուրջների պահպանում	1320	0	2	1.02	.832
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Առողջապահական հաստատությունների կառավարում	1191	0	2	1.04	.777
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Առևտրի կետերի գործունեության կանոնակարգերի պահպանման վերահսկող.	1122	0	2	1.07	.769
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Սննդի կետերում առողջապահ. չափորոշիչների պահպանման վերահսկողություն	1094	0	2	.97	.778
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Տեղական վեճերի լուծում	867	0	2	1.13	.759
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Ջրային ռեսուրսների և անտառների պահպանություն	1034	0	2	1.00	.814
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Օրենքի և կարգի պահպանում	1163	0	2	1.14	.770
ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. Տեղական հարկերի, տուրքերի, վճարների դրույքաչափերի սահմանում և գանձում	1147	0	2	1.51	.687

Հետևյալ գործոնները որքանո՞վ կարող են օգնել քաղաքացիներին՝ լուծելու իրենց խնդիրները ՏԻՄ-երի միջոցով. Կապեր	1370	0	2	.53	.757
Հետևյալ գործոնները որքանո՞վ կարող են օգնել քաղաքացիներին՝ լուծելու իրենց խնդիրները ՏԻՄ-երի միջոցով. Կաշառք	1306	0	2	.86	.910
Հետևյալ գործոնները որքանո՞վ կարող են օգնել քաղաքացիներին՝ լուծելու իրենց խնդիրները ՏԻՄ-երի միջոցով. Սոցիալական դիրք/պաշտոն	1362	0	2	.54	.770
Ընդհանուր առմամբ՝ որքանո՞վ եք բավարարված ՏԻՄ-երի աշխատանքից:	1362	0	2	.74	.661
Ինչպե՞ս կգնահատեք Ձեր համայնքի աշխատակազմի մասնագիտական որակները:	1171	0	2	1.04	.725

Հավելված 2. Համայնքային ծառայությունները համայնքների պետական և ոչ-պետական հատվածը ներկայացնող մասնագետների աչքերով

Կրթություն

Համայնքների պետական և ոչ-պետական հատվածները ներկայացնող մասնագետների (այսուհետ՝ «մասնագետ») հետ անցկացված առանձին հարցման արդյունքները ցույց են տալիս, որ նրանց մոտ կեսը բավարարված է իրենց համայնքների կրթական հաստատությունների մատուցած ծառայություններից: Այսպես, մանկապարտեզների մատուցած ծառայությունները «լավ» կամ «շատ լավ» են որակել հարցված մասնագետների 54.6 տոկոսը, հիմնական դպրոցների ծառայությունները՝ 56 տոկոսը, միջնակարգ դպրոցների ծառայությունները՝ 46.6 տոկոսը և ավագ դպրոցների ծառայությունները՝ 47.9 տոկոսը: Միաժամանակ, մանկապարտեզների մատուցած ծառայությունները «ո՛չ լավ, ո՛չ վատ» են գնահատել հարցված մասնագետների 28 տոկոսը, հիմնական դպրոցների ծառայությունները՝ 32.2 տոկոսը, միջնակարգ դպրոցների ծառայությունները՝ 28.4 տոկոսը և ավագ դպրոցների ծառայությունները՝ 22.9 տոկոսը (Գծապատկեր 7.1.1):

Մասնագետների 75 տոկոսի կարծիքով Հայաստանում մանկապարտեզները կառավարվում են ՏԻՄ-երի կողմից, թեև 64 տոկոսն է կարծիքում, որ այդպես էլ պետք է լինի: Մասնագետների 74.3 տոկոսի կարծիքով հիմնական դպրոցները կառավարվում են կենտրոնական իշխանության կողմից, ինչը գրեթե լիովին համապատասխանում է իրենց ակնկալիքներին: Նույնն է պատկերը նաև միջնակարգ և ավագ դպրոցների վերաբերյալ (Գծապատկեր 7.1.2, 7.1.3):

Առողջապահություն

Իրենց համայնքներում հիվանդանոցների և բժշկական կենտրոնների մատուցած ծառայությունները «լավ» կամ «շատ լավ» են գնահատել մասնագետների 30.9 տոկոսը, «ոչ լավ, ոչ վատ»՝ 24.6 տոկոսը, «վատ» կամ «շատ վատ»՝ 29 տոկոսը: Պոլիկլինիկաների/ամբուլատորիաների/բուժկետերի մատուցած ծառայությունները «լավ» կամ «շատ լավ» են գնահատել մասնագետների 37.5 տոկոսը, «ո՛չ լավ, ո՛չ վատ»՝ 27.8 տոկոսը, «վատ» կամ «շատ վատ»՝ 28.8 տոկոսը (Գծապատկեր 7.2.1):

Միաժամանակ, մասնագետների 71 տոկոսի կարծիքով հիվանդանոցները և բժշկական կենտրոնները կառավարվում են կենտրոնական իշխանության կողմից: Նրանց 75.4 տոկոսի կարծիքով հենց այդպես էլ պետք է լինի:

Մասնագետների 76 տոկոսի կարծիքով պոլիկլինիկաները (ամբուլատորիաները, բուժկետերը) ևս կառավարվում են կենտրոնական իշխանության կողմից: Սակայն մասնագետների 68 տոկոսն է դա համարել նորմալ,

մինչդեռ 25 տոկոսը ասել է, որ դրանք պետք է կառավարեն ՏԻՄ-երը (Գծապատկեր 7.2.2, 7.2.3):

Սոցիալական ծառայություններ

Իրենց համայնքներում սոցիալական նպաստների հատկացումը «լավ» կամ «շատ լավ» է որակել մասնագետների 28.7 տոկոսը, «ո՛չ լավ, ո՛չ վատ»՝ 39.2 տոկոսը, «վատ» կամ «շատ վատ»՝ 25.9 տոկոսը: Զբաղվածության ծառայությունների մատուցումը «լավ» կամ «շատ լավ» է որակել մասնագետների 23.8 տոկոսը, «ո՛չ լավ, ո՛չ վատ»՝ 32.2 տոկոսը, «վատ» կամ «շատ վատ»՝ 31.1 տոկոսը (Գծապատկեր 7.3.1):

Միաժամանակ, մասնագետների 78.5 տոկոսի կարծիքով սոցիալական նպաստների հատկացման ծառայությունը մատուցվում է կենտրոնական իշխանության կողմից: Մասնագետների 67.8 տոկոսի կարծիքով հենց կենտրոնական իշխանությունն էլ պետք է մատուցի այդ ծառայությունը, 28 տոկոսի կարծիքով դա պետք է անեն ՏԻՄ-երը: Մասնագետների 63.9 տոկոսի կարծիքով զբաղվածության ծառայությունը ևս կենտրոնական իշխանության կողմից է մատուցվում: Մասնագետների 65 տոկոսի կարծիքով հենց կենտրոնական իշխանությունը պետք է մատուցի այդ ծառայությունը, մինչդեռ 28 տոկոսը գտնում է, որ այն պետք է մատուցվի ՏԻՄ-երի կողմից (Գծապատկեր 7.3.2, 7.3.3):

Մշակութային հաստատություններ

Մասնագետների կեսից քիչն է բավարարված է իրենց համայնքներում գործող մշակութային հաստատությունների մատուցած ծառայություններից: Այսպես, գրադարանների և թանգարանների մատուցած ծառայությունները «լավ» կամ «շատ լավ» են որակել մասնագետների 37.2 տոկոսը, արվեստի/գեղարվեստի դպրոցների ծառայությունները՝ 46.9 տոկոսը և մարզադպրոցների ծառայությունները՝ 46.2 տոկոսը: Միաժամանակ, գրադարանների և թանգարանների մատուցած ծառայությունները «ո՛չ լավ, ո՛չ վատ» են գնահատել մասնագետների 30.6 տոկոսը, արվեստի/գեղարվեսի դպրոցների ծառայությունները՝ 30.1 տոկոսը, մարզադպրոցների ծառայությունները՝ 25.2 տոկոսը: Գրադարանների, թանգարանների, արվեստի դպրոցների և մարզադպրոցների ծառայությունները «վատ» կամ «շատ վատ» գնահատած մասնագետների թիվը տատանվում է 15 տոկոսի շրջակայքում (Գծապատկեր 7.4.1):

Մասնագետների 63.2 տոկոսի կարծիքով գրադարանները և թանգարանները կառավարվում են ՏԻՄ-երի կողմից: Մասնագետների 60.4 տոկոսի կարծիքով հենց ՏԻՄ-երն էլ պետք է կառավարեն դրանք: Արվեստի/գեղարվեստի դպրոցները ՏԻՄ-երի կողմից կառավարվում են մասնագետների 57.6 տոկոսի կարծիքով: Մասնագետների 51 տոկոսի կարծիքով դրանք պետք է կառավարվեն ՏԻՄ-երի, իսկ 42.7 տոկոսի կարծիքով՝ կենտրոնական իշխանության կողմից: Մասնագետների 63.2 տոկոսի կարծիքով մարզադպրոցները կառավարվում են ՏԻՄ-երի կողմից: Մասնագետների 56.3 տոկոսի կարծիքով մարզադպրոցները պետք է կառավարվեն

ՏԻՄ-երի, իսկ 36.8 տոկոսի կարծիքով՝ կենտրոնական իշխանության կողմից: (Գծապատկեր 7.4.2, 7.4.3):

Կոմունալ ծառայություններ

Մասնագետների մեծամասնությունը բավարարված է եղել իրենց համայնքներում էլեկտրամատակարարման, գազամատակարարման և աղբահանության/սանմաքրման ծառայություններից: Բացառություն է կազմել ջրամատակարարման/ջրահեռացման ծառայությունը: Այսպես, էլեկտրամատակարարման ծառայությունը «լավ» կամ «շատ լավ» են որակել մասնագետների 69.4 տոկոսը, գազամատակարարման ծառայությունը՝ 74.7 տոկոսը, և աղբահանության/սանմաքրման ծառայությունը՝ 56.3 տոկոսը: Ջրամատակարարման/ջրահեռացման ծառայությունը «լավ» կամ «շատ լավ» է որակել մասնագետների 38.2 տոկոսը, «ո՛չ լավ, ո՛չ վատ»՝ 32.6 տոկոսը, «վատ» և «շատ վատ»՝ 25.7 տոկոսը: Էլեկտրամատակարարման և գազամատակարարման ծառայությունները «վատ» կամ «շատ վատ» գնահատած մասնագետների թիվը տատանվում է 10 տոկոսի շրջակայքում. աղբահանության/սանմաքրման պարագայում այդ թիվը փոքր-ինչ բարձր է՝ 15.2 տոկոս: (Գծապատկեր 7.5.1):

Մասնագետների 62.5 տոկոսի կարծիքով էլեկտրամատակարարման ծառայությունը տրամադրվում է մասնավոր բիզնեսի կողմից: Մասնագետների 58.3 տոկոսի կարծիքով այդ ծառայությունը պետք է տրամադրվի կենտրոնական իշխանության, և միայն 32.6 տոկոսի կարծիքով՝ մասնավոր բիզնեսի կողմից: Մասնագետների 64.6 տոկոսի կարծիքով գազամատակարարման ծառայությունը տրամադրվում է մասնավոր բիզնեսի կողմից: Մասնագետների 58.7 տոկոսի կարծիքով այն պետք է տրամադրվի կենտրոնական իշխանության և միայն 33.6 տոկոսի կածիքով՝ մասնավոր բիզնեսի կողմից: Մասնագետների 88.9 տոկոսի կարծիքով աղբահանության/սանմաքրման ծառայությունը տրամադրվում է ՏԻՄ-երի կողմից: Մասնագետների 85.4 տոկոսի կարծիքով այդ ծառայությունը պետք է տրամադրեն հենց ՏԻՄ-երը: Մասնագետների 44.4 տոկոսի կարծիքով ջրամատակարարման/ջրահեռացման ծառայությունը տրամադրվում է մասնավոր բիզնեսի կողմից, 34.7 տոկոսի կարծիքով՝ ՏԻՄ-երի կողմից: Միաժամանակ, մասնագետների 43.8 տոկոսի կարծիքով այն պետք է տրամադրվի ՏԻՄ-երի, 29.9 տոկոսի կարծիքով՝ կենտրոնական իշխանության և միայն 22.9 տոկոսի կածիքով՝ մասնավոր բիզնեսի կողմից: (Գծապատկեր 7.5.2, 7.5.3):

Իրավաքաղաքացիական ծառայություններ

Մասնագետների կեսից ավելին բավարարված է իրենց համայնքներում տրամադրվող իրավաքաղաքացիական ծառայություններից: Այսպես, քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունը «լավ» կամ «շատ լավ» է որակել մասնագետների 56 տոկոսը, նոտարական ծառայությունը՝ 53.9 տոկոսը: Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունը «ո՛չ լավ,

ո՛չ վատ» է որակել նրանց 25.9 տոկոսը, նոտարական ծառայությունը՝ 24.5 տոկոսը: (Գծապատկեր 7.6.1):

Մասնագետների 75 տոկոսի կարծիքով քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունը տրամադրվում է կենտրոնական իշխանության, իսկ 22.2 տոկոսի կարծիքով՝ ՏԻՄ-երի կողմից: Մասնագետների 69.2 տոկոսի կարծիքով այդ ծառայությունը պետք է տրամադրվի կենտրոնական իշխանության և 28.7 տոկոսի կարծիքով՝ ՏԻՄ-երի կողմից: Մասնագետների 61.1 տոկոսի կարծիքով նոտարական ծառայությունը տրամադրվում է կենտրոնական իշխանության և 21.5 տոկոսի կարծիքով՝ մասնավոր բիզնեսի կողմից: Մասնագետների 58.3 տոկոսի կարծիքով այն պետք է տրամադրվի կենտրոնական իշխանության և 19.4 տոկոսի կածիքով՝ մասնավոր բիզնեսի կողմից: (Գծապատկեր 7.6.2, 7.6.3):

Գծապատկեր 7.1.1. Որքանո՞վ լավ կամ վատ են մատուցվում ստորև ներկայացված կառույցների ծառայությունները Ձեր համայնքում



Գծապատկեր 7.1.2. Ըստ Ձեզ՝ ո՞վ է կառավարում ստորև ներկայացված կառույցները



Գծապատկեր 7.1.3. Ըստ Ձեզ՝ ո՞վ պետք է կառավարի ստորև ներկայացված կառույցները



Գծապատկեր 7.2.1 Որքանո՞վ լավ կամ վատ են մատուցվում ստորև ներկայացված կառույցների ծառայությունները Ձեր համայնքում



Գծապատկեր 7.2.2. Ըստ Ձեզ՝ ո՞վ է կառավարում ստորև ներկայացված կառույցները



Գծապատկեր 7.2.3. Ըստ Ձեզ՝ ո՞վ պետք է կառավարի ստորև ներկայացված կառույցները



Գծապատկեր 7.3.1. Որքանո՞վ լավ կամ վատ են մատուցվում ստորև ներկայացված ծառայությունները Ձեր համայնքում



Գծապատկեր 7.3.2. Ո՞վ է իրականացնում հետևյալ ծառայությունները



Գծապատկեր 7.3.3. Ո՞վ պետք է իրականացնի հետևյալ ծառայությունները



Գծապատկեր 7.4.1. Որքանո՞վ լավ կամ վատ են մատուցվում հետևյալ կառույցների ծառայությունները Ձեր համայնքում



Գծապատկեր 7.4.2. Ըստ Ձեզ՝ ո՞վ է կառավարում ստորև ներկայացված կառույցները



Գծապատկեր 7.4.3. Ըստ Ձեզ՝ ո՞վ պետք է կառավարի ստորև ներկայացված կառույցները



Գծապատկեր 7.5.1. Որքանո՞վ լավ կամ վատ են մատուցվում ստորև ներկայացված ծառայությունները Ձեր համայնքում



Գծապատկեր 7.5.2. Ըստ Ձեզ՝ ո՞վ է մատուցում հետևյալ ծառայությունները



Գծապատկեր 7.5.3. Ըստ Ձեզ՝ ո՞վ պետք է մատուցի հետևյալ ծառայությունները



Գծապատկեր 7.6.1. Որքանո՞վ լավ կամ վատ են մատուցվում ստորև ներկայացված ծառայությունները Ձեր համայնքում



Գծապատկեր 7.6.2. Ո՞վ է իրականացնում հետևյալ ծառայությունները



Գծապատկեր 7.6.3. Ո՞վ պետք է իրականացնի հետևյալ ծառայությունները